

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

## ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

### ԵՐԿԴԻՄՈՒԹԻՒՆ ՉԵՆՔ ՈՒՋԵՐ

Գերագոյն ակնկալութիւններու դասն պատրանքէն յետոյ, աստու ու ամօթալիօրէն թափուած արեան վազորդայնին՝ հրապարակնետուած հարց մըն է «Միութեան Խնդիրը»:

Կոիւն առջ ու կոիւն միջոցին, երբ ստրուկ Հայը՝ խիզախ ու անվեհեր՝ Բոնակալութեան գահը կը սասանէր, երբ Հայ Յեղափոխութիւնը յաղթանակի նախընդօրին կը կարծուէր, երբ Հայ տէրորդ զաւճան կուրծք մը չէր գտներ իր գաշոյնը մաքրելու, երբ Հայ անտարբերներն անգամ խօսքով Հայրենասէր ու յեղափոխական կը դառնային, ո՛չ ոք մտահոգութիւնը կ'ունենար, ո՛չ ոք պէտքը կը զգար ընդհանուր միութեան, ո՛չ ոք զանազան կուսակցութիւններու անշատ գոյութիւնը արգելք մը կը նկատէր ազգային դատին յաջողութեանը: Եւ սակայն ինչ եղա՞ւ՝ այդ պահուն՝ այսօրուան չէզոքներուն, այսօրուան անտարբերներուն, այսօրուան հանրային իտէլալէ զօրի Հայ երիտասարդութեան, Հայ ենթադրեալ մտաւորականներուն ու Հայ ունեւորներուն զիրքը՝ Յեղափոխութեան հանդէպ:— Բացարձակապէս ա՛յն, ինչ որ է ներկային:

Կոիւն հրատապ վայրկեանին, ազգային ազատագրումին կամ բարեկարգութեանց գործադրութեան տենդոտ յոյժի օրերուն զանազան դասակարգերու պատկանող այս Հայերը կը զգային իրենց բոլոր պզտիկութիւնը, Վտանգին մէջ իրենց կեանքէն, իրենց եսէն, իրենց ապագայէն, իրենց գործէն, իրենց ցաւէն ու իրենց հաճոյքէն բան մը զոհելու իրենց օղորմելի անկարողութիւնը ու կը լռէին ամօթահար ու կը ճանչնային ու կը խոստովանէին բոլոր գերազանցութիւնը, բոլոր վսեմութիւնը անոնց, որոնք ինքզինքնին ամբողջովին Հայրենիքին տալու կարող կ'ըլլային:

Այդ շրջանին, Հայը պատուակ մը չունէր իր հայ-

րենասիրական ու յեղափոխական պարտականութիւնը չկատարելու համար: Լօպանօֆի վայրագ ընթացքը յայտնուած չէր տակաին: Պոլսոյ դեպքական մարմինը իրար կ'անցնէր բարեկարգութեանց ծրագրի մը շուրջը: Մոլդաւիներ, Խորհրդարանին բեմէն, սպասուած լիքներ կը գոռային սուլթանին հասցէին: Զէյթունի խրոխտ լեռներուն վրայ ապստամբութեան գրօշը կը ծածանէր: Հայ հարուստներ Հայաստանի մէջ հողեր գնելու ծրագիրներ կը մշակէին, Հայ ժողովուրդը Հայրենիք խուժելու կը պատրաստուէր ու Հայ Ղլղիկ երիտասարդութիւն մը բարեկարգեալ Հայաստանի վարչական պաշտօնները ստանձնելու սրտատուջ փութկոտութիւնը կ'ունենար: Եւ սակայն այդ շրջանին ալ, ինչպէս հիմա, ո՛չ Հայ ունեւորը, ո՛չ Հայ երիտասարդը, ո՛չ Հայ մտաւորականը իրենց ինկած բաժինը մտքէ անցուցին բերել յեղափոխական ձեռնարկներուն: Ու յեղափոխական տէւորը՝ զաշոյնը ձեռքը՝ ստիպուեցաւ պարտաճանաչութեան հրապարակել Հայ հարուստը, անոր գոց ու ժանգոտ հոգիէն փրցուած քանի մը ոսկիներով Յեղափոխական կրակը վառ պահելու համար:— Ասիկա երէկուան վիճակն է:

Այսօր, ազատութեան համար կուռելու անկարող Հայեր, ազատութեան համար իրենց հոգին ու իրենց ցաւը բանալու անընդունակ Հայ հաճի աղաներ, ազատութեան համար իրենց ապագան խորտակել չգիտցող վաւառս երիտասարդներ, իրենց յաւիտենական անպարտաճանաչութիւնը, իրենց անասնական անտարբերութիւնը, իրենց վատ, տխմար ու շահախնդիր չէզոքութիւնը պատճառաբանելու, արգարացնելու համար պատրուակ մը ունենալ կը կարծեն,— Միութեան Խնդիրը:

Միութեան պատրուակին կռթնող անտարբերներն ու չէզոքները անոնք են, որ երէկ՝ Յեղափոխութիւնը շահագործեցին, երբ անիկա իրենց շիւ նկատուածներուն յաջողութեանը ձեռնտու կը համարէին, այս ու այն կուսակցութեան պատկանելու հովեր առին, երբ դեռ յեղափոխական կոչուելու մօտան չէր անցած: Հիմա որ յեղափոխական էակածուիլը անպատուիչ ու անշնորհք բան մըն է, այդ միւսոյն չէզոքներն ու անտարբերներն են նորէն որ, այս անգամ ալ, միութեան Խնդիրը շահագործելու ելեր են:

—Միութիւն պէտք է, եղբայր, յեղափոխականները չմիանան նէ, մենք ալ չէզոք կը մնանք:

Ահա առի՛կ յաղթական փառոտը՝ ամէն ժամանակ չէզոք, ամէն ժամանակ անտարբեր մնալու, ամէն ժամանակ չէզոք, ամէն ժամանակ անտարբեր մնալիք ցամաքած ու մեռած հողիներու: Գործելու տրամաբար ու ընդունակ Հայ մը, այդ կարգի պատրուակներու առջև չի կրնար անշարժութեան մէջ յանձնուիլ: Երբ թշնամին անդադար կ'աւերէ մեր երկիրը, կը բռնաբարէ մեր պատիւը, կը սպաննէ, կը թալլէ մեր եղբայրները՝ մե՛նք չենք կրնար դաւաճան ու վատ չէզոքութեան մը դատապարտել ինքզինքնիս ո՛ր է և պատրուակի տակ, ո՛րքան ալ մեծ ու նուիրական բռնութիւնով ծանրացած ըլլայ ան:

Ահա այսպէս, խուճեր կը կազմուին, ընկերութիւններ կը հիմնուին տեւակ մը մարդերու կողմէ, որոնք հանրային գործունէութենէ զատ ամէն գործի ընդունակ են: Երկու հոգի իրարու քով եկան մի, անմիջապէս ընկերութիւն մը՝ կամ աւելի՛ ընկերութեան մը անունը կը հռչակուի, շրջաբերականներ կ'արձակուին, սրտածմբիկ բացազանչութիւններով ու ցաւազին շարժումներով լեցուն: Այսօր, արտասահմանի յարաճուն փութութեան մէջ, կը նշմարուի այլանդակ առատութիւն մը մանր մունր ընկերութիւններու: Երբ ամենքն ալ, առաջը կամ նոսազ միտքեան անստնով երեսն կոշտան: Ինչպէս որ, Աղէտքէն անմիջապէս վերջը, թերթիւրս անբնական ոսծիծաղելի աճուժը ժողովօտրդին այլասերման գլխաւոր գործիքը եղաւ արտասահմանի մէջ, անանկ ալ այս ընկերութիւնները յեղափոխական գործունէութիւնը ժողովօտրդին մէջ անդամալուծել կը ձգտին: Միութեան անունին տակ անշատման, ուժերու բաժանման, անմիտքեան սիւտակնէ որ կ'իրագործուէ անզգալարար ու անգիտակցաբար:

Միութեան խնդիրը երկար ատենէ ի վեր կը յուզուի կուսակցութիւններու միջև, պարագաներու համաձայն մերթ զանդաղ ու մերթ սուր կերպարանք մը աճելով: Բանակցութիւններ կատարուեցան, պատգամաւորներ տեսնուեցան, ինքնաձեռնարկ միջնորդներ փորձեցին միութիւնը իրագործել: Լոնտոնի ու Ֆրանկֆրի յեղափոխական սենեակներուն մէջ վիճարանուեցաւ ու ծեծուեցաւ ան: Մասնաճիւղեր միջամտեցին ու շրջաբերական շրջաբերականի վրայ տեղացեցին ժրնէվ ու Լոնտոն ու խորհրդատու ու անվերջանալի բանակցութիւնները տարիներ տեւեցին ու պարագաներուն ու հոգեկան տրամադրութիւններուն համեմատ՝ Միութեան խնդիրն ալ մարեցաւ կամ արժարժուեցաւ: Արդիւնք: Այնչէ՛ր, կամ աւելի ճիշտ, նոր շրջաբերականներ, նոր մեղադրանքներ, նոր ամբաստանութիւններ:

—Այսինչ կուսակցութիւնը՝ թէեւ երեսնաց փափաքող կը ձեւանայ, բայց միութեան հակառակ է...: Այն ինչ կուսակցութիւնը անկեղծ չէ՛ իր խօսքերուն մէջ, նպատակը միութիւն չէ՛, այլ ձուլում...:

Ա՛յ հասարակութիւնը, ո՛չ բանակցող մարմինները, ո՛չ ալ ինքնակաշ միջնորդները հասկցան մինչեւ հիմա թէ ինչու անիրականալի մնաց միութիւնը:

Իւրաքանչիւր կուսակցութիւն ջանաց հասարակութեան ցուցնել թէ ինքն է միութեան անկեղծ ու միակ փափաքողը: Իժարադարար տեսնուեցաւ որ կուսակցութիւնները այդ յայտաբարութիւնը կ'ընէին՝ ո՛չ թէ միութիւնը տիրական ու անհրաժեշտ հարկ մը նկատուի, այլ անոր շնորհիւ ժողովրդականութիւն շահելու ողորմելի մտահոգութիւնով մը:

Պէ՛տք է վերջ մը տալ սակայն այս երկդիմի կացութեան: Պէ՛տք է վերջ մը գտնեն միութեան անունին վատ շահագործումները: Պէ՛տք է վերջ մը գտնեն կուսակցութիւններու միջև քաշկոտուած գաղափարի ու խորհրդաւոր ապարդիւն բանակցութիւնները, որոնք՝ ո՛չ միայն ղէպի միութեան գաղափարին իրականացումը քայլ մը չստին, այլ նոյն իսկ ծառայեցին կիրքերը բորբոքելու, անջատուժը ընդլայնելու: Պէ՛տք է վերջապէս, որ իւրաքանչիւր կուսակցութիւն ըսէ անկեղծօրէն, համարձակօրէն ու անշահախնդրօրէն թէ ի՛նչ կը մտածէ միութեան խնդրին նկատմամբ, որպէս զի ամէն Հայ զիտնայ թէ Միութիւնը կարելի՞, հարկաւոր, փեստակար թէ օգտակար է:

Մինչև հիմա թեր ու զէմ մեկնութիւններու առարկայ եղաւ կուսակցութիւններու զիջքը Միութեան խնդրին նկատմամբ: Մենք անցեալով ու «ըօի» «ըսաւ»ներով զբաղելու ո՛չ ժամանակ, ո՛չ ալ տրամադրութիւն ունինք, համոզուած ըլլալով որ այդ քաշկոտուածները ո՛րքան կը փաստեն Գործին, բայց կ'ուզենք ու կը փութանք միանգամ ընդ միշտ յայտարարել կուսակցականներուն, չեզոքներուն, անտարբերներուն, միութեանականներուն և ո՛չ-միութեանականներուն թէ Հնչակեան կուսակցութիւնը փափաքող է ճշմարիտ ու եղբայրական միութեան մը:

Այս միութեան իրագործումին համար Հնչակեան կուսակցութիւնը կը նկատէ թէ ո՛չ միջնորդի և ո՛չ ալ պայմանի պէտք ունենալու են յեղափոխական մարմինները: Իտէալի մը սիրուն եղբայրակցելու համար միջնորդի մը, մանաւանդ չէզոք միջնորդներու պէտքը նախատինք մըն է համոզուած ու զիտակից յեղափոխականներուն ու յեղափոխական կուսակցութիւններուն: Իսկ պայմանաւոր միութիւնը կեղծիք մըն է և մեղանշուժ մը Միութեան Գաղափարին զէմ: Միութիւնը այս ու այն պայմանին, այս ու այն պարագային բռնապատուութեան տակ չի կրնար կատարուիլ: Պայմանաւոր ու բռնապատու միութիւն մը չի կանար տեւական ըլլալ ու յեղափոխական ամէն գործունէութիւն կը կասեցնէ: Միութիւնը ինքնարուխ ու արտաքին ո՛ր է և ձնուժ ու ազդեցութենէ զերծ՝ բնական կերպով, կատարուելու է՝ իրենց պարտականութեան լայն ըմբռնումը ունեցող յե-

դափոխական մարմիններու մէջ: «Մենք այս ինչ պայ-  
մանը կը գնենք», «Մենք ալ աս պայմանը կա-  
ռաշարկենք» խօսքերը Միութեան Գաղափարին հա-  
կառակ ոգի մը կը յայտնեն:

Պայմանաւոր ու բնապատեալ միութիւնը անկարելի  
է ունորանոր երկպառակութիւններու, նորանոր բաժանում-  
ներու պատճառ կը դառնայ Միութիւնը որպէսզի իրական,  
տեական ու արգաւանդ ըլլայ՝ պէտք է որ կատարուի  
անկեղծօրէն, անշահախնդրօրէն եղբայրօրէն, ԱՌԱՅՑ  
ՊԱՅՄԱՆԻ, ալ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԷՆ ՀԱՄԱՀՅՈՒՍԱՍՐ  
ՉՈՀՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

Երկդիմութիւն չենք ուզեր:

Եւ որպէսզի մեր խօսքերը, ինչպէս սովորութիւն  
է, սխալ չմեկնուին ու անոնց իմաստն ու սկիւն չխե-  
ղաթիւրուին, թո՛ղ Հայ Ժողովուրդը գիտնայ թէ Հըն-  
չակեան Կուսակցութիւնը պատրաստ է սէ է զոհո-  
ղութեան առջև չընկրկիլ:

Օրինակի համար՝

- 1. Չենք «Հնչակեան Կուսակցութեան» անունը:
- 2. Դադարեցնել իր պաշտօնական հրատարակութիւն-  
ները:

3. Կեդրոնական վարչութիւնը պատրաստ է ամ-  
բողջապէս հրաժարիլ:

4. Պատռոյ խօսք կեդր. վարչութեան կողմէ՛ ասպա-  
գայ միացեալ մարմին վարչութեանը մէջ ո՛րևէ պաշ-  
տօն չտեսնենք:

5. Երբ կան զեռ մեծ ու փոքր գեղարարներ,  
որոնք կը վրիպին մեր յիշողութեան, կանխառ Կընդոս-  
նիւնք զանոնք ալ:

ԵՐԿՈՒՄՈՒԹԻՒՆ ՉԵՆՔ ՈՒՉԵՐ:

Կը կրկնենք,

Միութիւնը որպէսզի իրական, տեական ու արդա-  
ւանդ ըլլայ, պէտք է որ կատարուի անկեղծօրէն, ան-  
շահախնդրօրէն, եղբայրօրէն, ԱՌԱՅՑ ՊԱՅՄԱՆԻ, ալ  
ԵՐԿՈՒ ԿՈՂՄԷՆ ՀԱՄԱՀՅՈՒՍԱՍՐ ԵՒ ԱՆՍԱՀՅՈՒՍԱՍՐ  
ՉՈՀՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ:

ԱՋԱՏ ԽՕՍՔԵՐ

ՀԱՄԱՐՈՒՆ ՔԱՐԵՐԸ

Նեղացուցիչ, երբեմն վճատեցնող, գրեթէ միշտ ան-  
խուսափելի են անոնք: Պէտք է անոնց զարնուիլ, պէտք  
է քայլերդ արիւնին յաճախ անոնցմէ, որպէսզի կարող  
ըլլաս՝ անոնց վրայ կ'իջելով՝ զանոնք փշրելու եւ շա-  
րունակելու ազնիւ ոգորումներու ճամբան: Թող որ, շատ

հեղ, աւելորդ իսկ է զանոնք ճգմելու տաղտուկը յանձն  
առնել: Ոտքիդ ծայրովը մէկդի կ'ընես զանոնք ու կ'անց-  
նիս, ձգելով որ ինքնիրեննին գլորին, ինչան անկումին  
անդունդներն ի վար: Բայց աօիկա խառնուածքի խըն-  
դիր մըն է. մարդիկներ կան, որոնք ամէն զրգուով,  
ամէն յարձակումի, ամէն նախատիքի առջև անալլ-  
ալլ ու մարմարեղէն անշարժութեամբ մը կ'արձանանան  
ու կը պահեն լուծիւն մը, որ արհամարհոտ պիտի  
ուզէր թուիլ, ալ որ անկարողութիւն, կոտելու ան-  
ընդունակութիւն, ինքնապաշտպանութեան միջոցին ա-  
ւելի վրայ տալու զգուշատրու իմաստուն վախը ու պար-  
զապէս վատութիւն կ'ենթադրէ: Ուրիշներ—նուազ ամ-  
պածրար ու աւելի բրտօրէն մարդկային—իրենց գէժ  
ուրուագծուող հակառակութեան առաջին շարժումին,  
յարձակումի առաջին տարտամ կամէութեանը՝ բռունցք-  
ներն շիփ շիտակ կ'իջեցնեն յանդգնիլ պատրաստուող  
ստորին գլխուն ու զայն տեղնի տեղը կը խորտակեն:

Այս բոլորը բուական մւլթ ու բուական խրթնօրէն  
այլաբանական թուին զուգէ: Ինչ փոյթ: Հասկցողները  
կը հասկնան, ու աօիկա կը բաւէ մեզի հիմակահիմա:



Ինչպի շքեղ իտէալ մը փորձուած ամէն հզօր ու  
հպարտ ճիգ, ազդային ճակատագրին բարեկամանը հա-  
մար հոգիի, տաղանդի, կենքի ամէն զոհարբում,  
նոր ու տիրական զեղեցկութեան ամէն իրականացում  
նախասահմանուած են մեր մէջ՝ իրենց առաջին խո-  
յանքին՝ բաղխելու չկամութեան, անկարողութեան, ան-  
տարբերութեան, անհասկացողութեան ու վատութեան  
կոյր ամբարտակներուն:

Ճակատագրական բան մըն է աօիկա, որուն առ-  
ջև պէտք է համակերպիլ կանխառ, բայց որ պէտք չէ  
լրատէ կորուստը, պէտք չէ արգիլէ անձնուիրութիւնները,  
պէտք չէ անդամալուծէ բարի կամքերը:

Յեղափոխականներ, հոգեկան ու մտաւոր սերտ կա-  
պերով միացած, «գրականութիւն ընելու» ճիգով մտա-  
հոգութեան բուրբոյրն զուրկ ու անձնական է՛ն արդա-  
բացի փառասիրութենէն ալ հրաժարած, մերկացած՝ կ'ել-  
լեն՝ սկսուած ու անկասելի նուիրական Փորձին շա-  
րունակութեան ու հզօրացման նոսրուած իրենց անշա-  
հախնդիր ու անանուն ջանքերէն դուրս՝ Ընդվումին  
ամենի ձայնը կը բարձրացնեն ու յեղափոխական կրա-  
կոտ ու միանգամայն բանառ բրտականտի մը անա-  
կընկալ ու անսովոր օրինակը կուտան: Իրենց պար-  
տականութեան խղճահար ու ուղղամիտ կատարու-  
մէն գոհ, անոնք պէտք չեն զգար հարկաւ փութկոտ  
երախտապիտութիւններու, հնազանդ ու անմիջական հիա-  
ցումներու: Փիտան թէ սրբան ապականուած է մթնո-  
լորտը որուն մէջ կը լսեցնեն իրենց խօսքերը ու սրբան  
խոսքն ու ապերախտ պարձած՝ հոգը որուն վրայ կը

նետն ազնիւ ու արգաւանդ սերմերը վաղուան երազուած հունձքերուն: Բայց փոխանակ զգալու իրենց ետին հաւատարիմ, տաք ու խանդավառ սրտերու բարախուն զանգուած մը, երբ անիմաստ դիտողութիւններ, ըմբոստացուցիչ գծուարահածութիւններ, լպիրշ ու չքատոր արհամարհանքներ, անկարող ու թունալից ժխտումներ կ'ընդունին՝ չեն կրնար ինքզինքնին արգիլել վայրկեան մը դառնօրէն ժպտիլ: Բարեբաղդաբար Գործը ժամանակ չի ձգեր յամենալու ասանկ մեղամաղձոտ խոկումներու մէջ, ու անոնք կը ծռին նորէն անհրաժեշտ ու ստիպողական ճիգին, ո՛չ թէ որովհետեւ հարկ կը տեսնեն գոհացնելու այսինչ անբուժելի իմաստակը, կամ այնինչ զժգոհ տիրացուն, այլ որոհետեւ չեն կրնար չհրպատակիլ իրենց նկարագրին, իրենց խառնուածքին, որ կը մղէ, կը դատապարտէ գիրենք ո է է «յեղափոխական» գործունէութեան մը:

\* \* \*

Անշուշտ մեր պարագան չէ՛ առիկա: Զայնքը, որ մեզի կը հասնին ամէն կողմէ, սրտապնդող են ու քաջալերիչ: Յեղափոխական շուարած գինուորը յանկարծ կը զգայ ճշմարտապէս յեղափոխական անկեղծ ու անբերկրմի խօսքին սփոփանքը ու ինքզինքը կուտայ անոր կազդուրիչ ու բարերար շունչին, յեղափոխական անվճատ Բանակը կը սկօի հետզհետէ որոշել իր ճշմարիտ բարեկամները, իր սրտցաւ ու անձնուրաց առաջնորդները՝ զինքը շահագործող ինկած մարդակերպներէն ու իր վեհանձն միամտութեանը մէջ իրենց գձուծ անձնասիրութիւններուն յագուրղը փնտռող անիմաստ շոշորդներէն: Յեղափոխական արծարծուած հաւատքի ու տենդոտ գործունէութեան հոսանք մը կը փրթի: Անշատուած, մեկուսացած, այլ անվթար ու մաքուր ուժեր, նոր ու կոյս կորսփերու միացած, հզօր թափով մը, Գործին կը լծուին: Հաւատք, կամք, անձնութիւն, զոհողութիւն, տաղանգ ձեռք ձեռքի տուած ճամբայ կ'ելլեն տիրաբար ու յաղթական ոգեւորութեամբ:

— Ի՞նչ կայ... Ի՞նչ եղաւ... Ինչո՞ւ կը շարժին... Ի՞նչ ըսել կուզեն... ո՞ր կը վազեն... Ինչո՞ւ ատանկ խրոխտ ու սեղմ կարգերով կը շտապեն... Ինչո՞ւ ատանկ ազուր ու աքու շեշտեր կը հնչեցնեն... չըլլա՞յ որ մենք մոռցուինք, նսեմանանք... չըլլա՞յ որ երևան գայ մեր դիրքին տգեղութիւնը, մեր եռական անշարժութեան խաղաղութիւնը...

Ու կը փութան զուրո տալ, փսխել իրենց հոգիին ամբողջ լճացած թարախը, իրենց անկարող կատաղութեան բովանդակ լուսնոտ լորձունքը:

Զարգացածները, «մտաւորականներն» են ասոնք... անոնցմէ է որ կուգայ չկամութեան ու ատեցող ուրացումի առաջին պիղծ ճրուղը:

Ասիկա բնա՛ւ չզարմացներ մեզի: Այդ պարոնները բնականաբար պիտի չկրնային հանդուրժել որ յեղափոխական—կուսակցական բրորականտ մը գեղեցկօրէն ու բանաւորօրէն ըլլուէր:

— Գեղեցկութիւն... տրամաբանութիւն... վա՛յ, աս ինտո՞ր բան է... բայց ատոնք մեր մենաշնորհները չէին մի... մենէ դուրս ատանկ բան կ'ըլլա՞յ մի եղբր...:

Ու ջախջախող իրականութեան առջեւ սահմոկած, զգետնած, անկարող դիմադրելու, անկարող հետեւելու ու անկարող մանաւանդ հեգնելու, յեղափոխական անողոք խարանին այրուցքը զգալով իրենց ուղեղին վերայ, ելեր յուսահատօրէն, վեհերոտօրէն արհամարհել ձեւանալ կը փորձեն ու աղարտել, վարկաբեկել կը ներկային մեր բուն ու խանդավառ ջանքերը:

Շատ չմեղադրենք սակայն այդ եղկելիները: Յանցանքը բոլորովին իրենցը չէ: Յեղափոխական գործունէութիւնը տասը տարիէ ի վեր, նոյն իսկ իր է՛ն փոթորակից ու է՛ն փայլուն շրջանին, տեսակ մը խորշում, տեսակ մը զրժկամակութիւն ազգած է մեր հասարակութեան մէկ աննշան մասին, որուն մէջ Գործին սէրը չէ՛ կրցած բաւական ուժգին ու բաւական խորունկ ըլլալ՝ մոռցնելու համար Խօսքին անբաւականութիւնը: Պօշոյ կարգ մը դպրոցներուն մէջ, մակերևութային դաստիարակութեամբ պատրաստուած՝ ազգային է՛ն ահաւոր օրերուն հասնող սերունդ մը մանաւանդ, ամէն բանի արտաքին վայելուցութիւնը որոնելու ու տեսնելու ուշադիր՝ Յեղափոխական Շարժումին մէջ հաճեցաւ հաստատել արտայայտութեան թերութիւններ, ձեւի աններդաշնակութիւններ, պաւնանքի հակիրճութիւններ, ու առիկա յաղթական փաստի մը պէս գործածեց՝ պատրուակելու համար իր վատ անտարբերութիւնը:

— Ի՞նչպէս կարելի էր գործակցիլ, եղբայրակցիլ «այդ յեղափոխականներուն» հետ, որոնք «սուրբ գործ», «ազատութիւն», «Հայաստան» պոռալէ ու երթալ մեանիէ զատ ուրիշ բան չէին պիտեր...:

Այդ սխալի վայելապաշտները կարող չեղան տեսնել Յեղափոխական Խոռվքին մէջ անզուգական գեղեցկութիւնը անձնազոհութեան հոյակապ խոյանքին, որ դարերու ստրուկ համակերպութիւնը շալկած, անոր տակ տքացող ցեղի մը զաւակները յանկարծ ոտքի կը հանէր ու զանոնք զէպի Բոնութեան կախաղաններն ու զընդանները կը վազցնէր խելայեղօրէն: Այս մեծ, այս վսեմ ու եղբրական Գեղեցկութեան իրականացումը չէ՞ր արժեր, չէ՞ր փոխարիներ արդեօք հազարներու արիւնին ահաւոր հեղեղումը: Ապագային Խղճմտանքը պիտի ըսէ առիկա:

Իրա՛ւ, բացազանչութիւնները ծիծաղելի էին երբեմն այդ շրջանին, հեռտորութիւնը սղարթօրէն կը զինովնար, կը տարուէր, հասարակ տեղիքները չէին միշտ խնայուներ, բայց անոնք նորէն ահադին ազգեցութիւն կ'ունենային հասարակութեան վրայ, որովհետեւ թօսքը Գոր.

ծին հետ կը քալէր անմեկին...

Ու յետոյ, կ'ուզէք որ ամէն բան սրտբացօրէն, յեղափոխականօրէն ըսենք, աւելի՛ աղէկ է խենթ ու ծիծաղելի խանդավառութիւնը, քան խելացի—օ՛րջանիօն—եսականութիւնը, սրամիտ անաշարժութիւնը, վայելուչ ատարբերութիւնը: Աւելի, բարձրօրէն շահեկան ու ազնւականօրէն աղւար է ամբոխը, որ՝ Գաղափարի մը համար՝ ապարդիւնօրէն, աղետաւորօրէն, մահացուօրէն կը խանդավառի, քան ամբոխը, որ՝ խնկելի իտէալին կոնակ դարձուցած՝ խելացիօրէն սատկած, զիականացած՝ կը լռէ, կ'անշարժանայ:

Պէտք չէ՛ ենթադրել թէ հանդարտութիւնը, թմրած ու պաղած անաշարժութիւնը, յարասեւ զգուշաւորութիւնը մտաւորական գերազանցութենէ, իմաստուն շրջահայեցողութիւններէ, խորունկ ու լուրջ գիտակցութենէ առաջ կուգան, այլ շատ անգամ խանդավառելու անկարողութենէ հօգիտ չորութենէ ու մանաւանդ վատութենէ: Բացազանչութիւնն ալ ամենուն գործը չէ. մարդիկն են կան, որոնք չեն կրնար բացազանչել, թէեւ ատոր փափաքն ու ստիպողական պէտքը զգան: Չգտնուեցա՞ն ժողովուրդի առաջնորդներ, որոնք յեղափոխական կրակը՝ խանութպանի, վաճառականի ցամաք ու վարպետ դարձուածքներով՝ մարեղ աշխատած ատեննին՝ բացազանչելու պէտք ունեցան երեւմ, զայլակողած ամբոխներու աչքին փոշի փչելու համար, բայց չի կրցան «չէնք շնորհք» բացազանչել...

\* \* \*

Անշուշտ պէտք իսկ չունինք ինքզինքնիս պաշտպանելու «բացազանչութեան», «հասարակ տեղիքի» ու «պայմանագրականութեան» մեղադրանքներու դէմ, որոնք՝ մեզի ուղղուած՝ խօլբարբ, անդիմադրելիօրէն ծիծաղելի, անկարելի՛ են: Յեղափոխական բրօքսական տը զոր մենք հոս կ'ընենք—հպարտութեամբ կրնանք ըսել ասիկայ, որովհետեւ կամովին ու բողոքովին անանձնական ճիգ մըն է մերը—վեր է արդէն այդ կարճամիտ «մտաւորականներուն» գնահատումէն: Եւ եթէ կը զբաղինք իրենցմով, անոր համար չէ՛ որ—առանց վարանումի կրնանք վստահ ըլլալ ատոր—կը վրդովեն մեզի իրենց ճղճիմ ու խեղճուկ ու պրդուցները, այլ որովհետեւ հոգիի վիճակը զոր կը մատնեն, տարօրինակութեան թելադրական է, որովհետեւ նիւթը՝ գերազանցապէս արգաւանդ՝ կը փորձէ մեզի, և որովհետեւ խօսքերը, զորս կը ստիպեն ընել մեզի, շատոնց պէտք էին ըսուած ըլլալ Յեղափոխական Մտածուած ներկայացնող օտկանի մը մէջ:

Ի՞նչ, նո՛ր ունենալ կը սկսին կոր այդ անախորժ սպաւորութիւնները, երբէ՞ն ի վեր յոգեբ էին խելս. յեղ ու հերթաձակ հոնաօրութիւններու ունայն աղմուկը, դեռ մինչև հիմայ անկարելի՛ կը իրենց հաս-

տատել՝ մենք շատ հեռու, իրենց քթին տակ՝ անվրահատ ու երջանրկ փթթուածը «բացազանչութեան», «հասարակ տեղիքին», «պայմանագրականութեան»: Աւելի հեշտին, աւելի առատ չպիտի՛ գտնէին հոն, ուզած ատեննին, ինչ որ ի գուր կը փնտոնն այս կողմերը:

Բայց չէ՛, մեզի կը դառնան, զէպի հոս կը նային, ցաւազին ու պրպտող նայուածքներով: Խեղճ տղաքներ, ձեռուրնին չէ՛, ակամայ է իրենց բոլոր սգօրութիւնը: Իրենց ինքնագոհ հոգիներուն պարապ խաղաղութիւնը՝ մէկէն ի մէկ մտակուած՝ կը խռովի, կ'արիւնի ու անոնք կը զգան թէ լմնցած է ալ, իրենց համար, առանց անպատեհութեան յոխորատու, անպատժօրէն նախատելու, յաղթականօրէն արհամարհելու արբշտող ու վայրագ հաճոյքը:

Նոր բան մը կայ ուրեմն, նոր կամ փոխուած բան մը, որ թունկ կը հանէ «պայմանագրականութեան», «հասարակ տեղիքներու» ու «բացազանչութեան» ամենի թշնամիները: Բայց չըլլա՞յ որ՝ մինչեւ այսօր, հանդիստ ու երանելի վատութեամբ մը, Յեղափոխական Բրօքսական տը ծաղրելու, քաշկառելու վարժուած՝ կը սահմակին յանկարծ՝ յեղափոխական բրօքսական տի մը առջեւ, որ՝ եթէ բացազանչէ իսկ՝ հոս յակապօրէն բացազանչելու անուր ու շատերու անձանօթ զեղեցկութիւնը կ'իրականացնէ, չըլլա՞յ որ նեղփի, չարչարուիլ սկսին, առջի պէս, ալ չկրնալով գործածել իրենց ժողատ հեգնութիւնը, չըլլա՞յ որ մանաւանդ՝ լաւագոյն զէնք մը գտնելու անկարող՝ ու յագեցնելու համար իրենց անկարողութեան ինքնակեր զայրոյթը, ստիպուած ըլլան—օ՛ր անյիշաչար ներդաւածութիւնը հին, անարգուած բառերուն—իրենց կարգին, յուսահատօրէն ապաւինելու «բացազանչութիւն», «հասարակ տեղիք» ու «պայմանագրականութիւն» մակղիքներուն ծերացած, մըլտած, թոմթոկած, այլ միշտ ձեռնտու ու կարեկից պայմանագրականութեանը...

\* \* \*

Բայց ո՞վ են ասոնք, ի՞նչ ապացոյցներ տուած են բարձրագոյն իմացականութիւններու, ո՛ր են իրենց արտադրած գործերը, ի՞նչ հեղինակութեան կոթնած՝ վերէն կը համարձակին յոխորտալ:

«Բացազանչութիւն»... բայց կարող եղած են արդեօք, կեանքերուն մէջ, սրտէ բղխած ու տիրակալնօրէն սրձակուած բացազանչութեան մը:

«Հասարակ տեղիք»... բայց ո՛ր են իրենց իտկատիպ գաղափարները, իրենց ուրոյն ու ամուր համոզումները, ի՞նչով կը պարծենայ հպարտ պարապը իրենց ուղեղին:

«Պայմանագրականութիւն»... բայց ո՛ր է իրենց յանգուզն ու ստեղծագործ ինքնատպութիւնը, ճո՛րն է

իրենց մտաւորական բարդութիւնը, ինչի մէջ կը կա-  
յանայ իրենց ամբողջ ըմբռնողութիւնը, կարող եղած  
են երբէք երկու համոզուած, արգաւանդ ու ազդու  
խօսք քովէ քով բերել՝ ցնցելու, կազդուրելու, դաստի-  
արակելու, բարձրացնելու համար լքուած ու մոլորած  
ու մասնուած ամբոխներու հոգին: Քանի մը սըկէ  
նըկէ հասկացողուած՝ առաւել կամ նուազ նորելուկ ու  
թարմ բառատոքս—վարդապետութիւններու սոփեսոս-  
ցումէն ու քանի մը չմարտուած ու կապկուած նեօ-  
միսթիք հոգեհայեցումներու խելկատակումէն դուրս՝  
խելքերին բանի մը հասած ունի:

«Ունայնաբանութիւն»... բայց այդ հոյակապ «մտա-  
ւորականները», որոնք ինքզինքնին մարդկային Մտա-  
ծումին նուաճողները, տիրացողները կը գաւառին  
լռելեայն, կրնան արգեօք յաւակնիլ թէ վարկեան  
մը պիտի կրնային փորձել, ինչ որ կ'ընենք մենք  
հոս, նկատելով իսկ թէ չհաւասարինք ձեռնարկուած  
Գործին բարձրութեանը:

Բայց ինչու այսքան խօտապահանջ ըլլանք, նոյն  
իսկ իրենց նախընտրած—աւելի ճիշդ պիտի ըլլար Ը-  
սել ապառախանա՞ծ, որովհետեւ «ընտրութեան վարան-  
քը» չէ՛ որ կրցած են ունենալ, խեղճ աղաքները—  
թողուցիկ տպաւորութիւններու նօթագրումին ու քնար-  
երգական շնչատ անքնութիւններու զուտ գեղեցկագի-  
տական ճիւղին մէջ՝ կը կարծեն—եթէ, ազգային  
օուզի ու քայքայման օրերուն, տարրական ամօթ-  
խածութեամբ մը, չեն կրցած հրաժարիլ ատկից—  
կը կարծեն թէ վարպետներ, անզուգական հմայիչ-  
ներ, անդիմադրելի արուեստագէտներ հանդիսացած ու  
նուիրագործուած են: Ինչ է նոյն իսկ իրենց գեղեց-  
կապաշտ ճիւղերուն ճշգրիտ նկարագիրը: Առաւել կամ  
նուազ շահեկան էգի մը մագերուն ու շրջազգես-  
տին հոռէն զատ ուրիշ բան երգած ունին: Ո՞վ  
ըսաւ սակայն որ Գեղեցկութիւնը հալած, գիշա-  
ցած ու տարփերազ աղջկան մը դալկահար յղացու-  
մին մէջ կը սահմանափակուի, կը բանտարկուի, կը  
վերջանայ:

Ա, կը հասկնանք իրենց ջղապրոտութիւնը, իրենց  
սրտմտած կատաղութիւնը: Մտաւորական քրոնիկ  
պնդութենէ տառապող այդ տխուր էսթէթները չեն  
կրնար հանգուծիլ, որ ուրիշներ կարող ըլլան իրենց  
մատչելի շպարուած, խարուսիկ ու ախտաւոր գեղեց-  
կութենէն աւելի մեծ, աւելի առոյգ, աւելի հպարտ  
ու հարազատ գեղեցկութեան մը արտայայտումին  
հասնիլ ու Յեղափոխական Գեղեցկութիւնը իրականացնե-  
լու՝ ալլապէս դժուար ու հզօր ճիւղին մէջ յաղթա-  
նակել:

Ո՞վ ըսաւ արդէն որ Յեղափոխութիւնը չհաշ-  
տուիր Մտածումին հետ: Ամէն ժամանակ ու ամէն  
տեղ մտաւորականներն են եղած Յեղափոխութեան

կարապետները: Հասարակ տեղիք մը գործած է ալ  
այս ճշմարտութիւնը, ու ասոր շատ խորապէս համոզ-  
ուած ըլլալնուն համար է թերեւ որ մեր սխրալի  
«մտաւորականներէն» ոմանք, անձեռնմխելի, անկապ-  
տելի իրաւունքը ունենալ կը յաւակնին Հայ Յեղա-  
փոխութիւնը վարելու: Բայց այդ խրոխտ բռնաբարուած-  
ները, որոնք ամէն վարկեան օրինակ կը բերեն  
Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնը, կը մտնան յա-  
ճախ, որ անոր մտաւորական վարիչները խօսքով չչա-  
տացան միայն, այլ Յեղափոխութիւնը պատրաստելէ ու  
չղթայագերծելէ վերջ, մինչև կառափնատներու դժնէ  
վերելքը զայն ապրեցան: Ու դեռ երկէ, մտաւորական-  
ներ չէին, որ՝ Ռուսիոյ ջախջախիչ բռնապետութեան  
դէմ մղեցնած՝ փառացի իջան արիւնջու ու բանտէ  
բանտ, աքօրէ աքսոր քաշկոտուեցան: Մը-  
տաւորական մը չէր նորէն՝ որ Ազատութեան փո-  
թորիզ երզը հնչեցուց սարուկ Հայուն հոգիին մէջ:  
Բայց Նարանդեան հասարակ բանագող մը պիտի  
մեար, եթէ Սիպրիի վսեմ Սքսորեալը չմտնէր:

Ո՞վ ըսաւ որ Յեղափոխութիւնը կը սպաննէ Ար-  
ուեստը: Անոնք որ քիչ շատ կը հետեին եւրոպական  
մտաւորական ու ընկերային շարժումներուն, անոնք կը  
տեսնեն, ամէն օր, հսկայ արուեստագէտներ ու մե-  
ծանուն գրագէտներ որ կ'ուզան հետզհետէ յեղափոխա-  
կան կարգերը մտնել, ու յեղափոխական ձգտումը եր-  
թալով կը շեշտուի ու փառաւոր հրաշակերաններ կ'ար-  
տադրէ: Վէրհարնի—իշխու համար՝ շատերու մէջէն  
անուն մը, որ է՛ն ծանօթներէն կը թուի ըլլալ մեր  
«մտաւորականներուն»—ամենէն հոյակապ ցերթուած-  
ները անոնք չմ'ն միթէ, որոնց մէջ յեղափոխական  
կարմիր շունչ մը կը հեւայ:

Անշուշտ անարին ու եսամոլ տիւղթանութիւնը չեն  
ասոնք, այլ համոզուած, ներշնչուած ու խանդավառ  
կամաւորներ, նկարագրի ու կամքի միացած ալլասեր  
տաղանդներ, արդարութեան ու իտակի ծարաւի ըն-  
տրուած ու եզրայրական հոգիներ: Ու պէտք չէ մոռ-  
նալ որ Յեղափոխութիւնը բոլորովին գասակարգային  
ու տնտեսական է հոն, ուր այս շքեղ ջարուները կը  
կատարուին: Արուեստագէտներ ու մտածողներ՝ առանց  
կանչուած, աղերսուած ըլլալու տանջուող ու խօշխոզ-  
ուող եղբայրներու աղիողորմ ձայներէն՝ ինքնաբերաբար  
կ'ուզան միանալ յեղափոխական գործիչներուն, աշակ-  
ցիլ անոնց ու գեղեցկութիւն տալ՝ անոնց միջոցով՝  
զրկուած ու անասնացող ամբոխին: Ու վաղը անոնք  
կ'ուրիւն մէջ պիտի ըլլան ապահովաբար, առաջին կար-  
գերուն վրայ իյնալու պատրաստ:

Մեր խեղճուկ «մտաւորականներուն» գաճախով՝  
զուարճալի չէ՛ տեսնել այդ իմաստակները, որոնք, ի-  
րենց անարգ մեկուսացումին մէջ, կը ճարտարութիւն  
չեմ գիտեր ինչ իմաստասիրական շող մը տալու իրենց

անձնապաշտութեանը եւ չեմ գիտեր ի՞նչ պատրասկան ան-  
հատապաշտութիւններու փառաւորութիւնը քողարկելու հա-  
ւաքական ու այլապէս ջանքերու իրենց ամօթալի ան-  
ընդունակութիւնը:

Յեղափոխութիւնը ո՛չ միայն չպանդիր Գեղեցկու-  
թիւնը, այլ նոյն իսկ կը գեղեցկացնէ, կ'ազնուացնէ իրեն  
մերձեցողները, իր դրօշակին տակ անձնութեամբ, ուղղա-  
մարտութեամբ ու հաւատարմութեամբ ծառայողները:

Անոնք որ Չիրքիանիի էջին — յեղափոխական հա-  
ւատքի այդ «հանգանակ»ին — առջեւ չզգացին վեհագոյն  
գեղեցկութեան մը մաքուր վայելքը, խելայեղ սաբոտա՞ր,  
անոնք պոստիկացած, փտտած, որդնոտած հոգիներ են  
արդէն: Արուեստի խնամքներ չի կան հոտ, գրագետի  
Ֆոստիներ չեն առնոք: Յեղափոխական գործիչ մը, ըմ-  
բոստ մարդ մըն է, որ կը խօսի, բայց ս՛րջափ մեծնալու,  
ս՛րջափ անձնութեամբ անպարտէն ապրելու է այդ պարզ ու կտրուկ  
խօսքերուն հրաւիրող գեղեցկութիւնը կարենալ արտաշնչելու  
համար:

Հայ Հայրենիքը ապրեցաւ երէկ է՛ն ահաւոր տոմար  
որուն տիեզերք հանգիստտես եղած ըլլայ երբէք: Կոիւին  
չմանակցեցան, շա՛տ լաւ: Բայց ի՞նչ եղաւ այս արիւնի  
ու արհաւիրքի շրջանին ազդեցութիւնը մեր «մտաւորա-  
կաններուն» վրայ: Ոչ ի՞նչ: Հայ Տառապանքին վայնա-  
տունը վայր կեան մը չզարձուց զիրենք, ու մինչեւ վերջը  
զբաղած մնացին մազերը շոյելու ու անուշահոտ շրջա-  
զգեստը հոտուրտալու իրենց տեղոյն երազին: Ո՞վ փոր-  
ձեց իրենցմէ Հայ Աւերումին եղերական, վիթխարի ու  
անսպաս գեղեցկութեան արոտայտութիւնը: Քանի՞ հոգի  
եղան իրենցմէ, որոնք կարող եղան Հայ Յաւիտեան  
օսհամարներէն արուեստի գործ մը իրականացնել, քա-  
նի՞ էջ գրեցին ուր Հայը կարենար ունենալ իր ահաւոր  
ճակատագրին սարսուռը:

Իսկ ասոր փոխարէն, ս՛րջափ սիրային եւ այլ գէլգէ-  
կութիւններ լեցուցին մեր թերթերը, Արիւնահեղութեան  
է՛ն դժնդակ վայրկեանին իսկ:

Անշուշտ մենք չպիտի մեղադրէինք զիրենք այս կէտին  
վրայ: Ամէն մարդ կըրցածը կ'ընէ: Առաւել կամ նուազ  
տիրացուական տկարութիւններու նկատմամբ մեր ներքո-  
ղամտութիւնը անբա՛ւ է, ու նոյն իսկ երբեմն անոնցմէ մէկ  
երկուքին — գրեթէ մէկին, քան երկուքին — գեղեցկագի-  
տական անմեղ պարանքները՝ հինէն մէջերնիս մնացած գե-  
ղեցկապաշտ որկրամուտութեամբ մը՝ կ'ըմբռնուին, բայց  
ասիկա թող չեւլայ՝ ենթադրել տայ իրենց թէ մեր շեփօրը  
պիտի փոխէինք իրենց քնարին, մեր խօսքը իրենց թօթօ-  
վումին, մեր աղաղակը իրենց մրմունջին հետ...:

Իսկ իրենց հեղուկութիւնը... օ՛ խօսի՛նք նորէն այդ մա-  
սին, իրենց այդ կտորած, քեօքցած գէնքը մեզի դէմ չէ՛ որ  
պիտի կրնային գործածել: Հոս հեղուկութենէ վախոյող չի կայ,  
ու ասոր պակասը չէ՛ որ մտահոգութիւն կը պատճառէ մեզի:

Այդ բանէն շատ, բայց չափազանց շատ կայ մեր  
քոյրը, չենք գիտեր ի՞նչ ընենք, պահելու տեղ չունինք...  
ու ի՞նչ յարմար առիթ քիչ մը թեթեւալու...: Երբ որ  
պարտաւոր հնք ամէն բանէ առաջ — ու ասոր համար շատ  
չենք կոկծար — այս յեղափոխական օտկանը չպղտիկցնել  
քանի մը պղտիկ շոշորդներու անձերովը զբաղելով հոս, ու  
մանաւանդ բնա՛ւ տրամադիր չենք մութին մէջէն զուրս  
հանելու քանի մը աննշան խլէզներ:

Չէ՛, այս ծառայութիւնը չենք կրնար կոր մատուցանել  
իրենց...:

ԱՍՊԱՏԱԿՆԵՐԸ

ՄԻՆԱՍ ՕՂԼՈՒ

Բ.

ՎՈՐԺԱԳԵՏԸ

Էլրի Քիրազ, Քեթիկէն կիտիլի եւ Էլրի Տէրէ  
գիւղերուն միջեւ, բլուրի մը բարձրաւանդակին վրայ  
կը կ՛իկտի գիւղական դպրոցը: Երբ որ կոշտ կոճեր, կեր-  
պով մը տաշուած և իրարու ազուցուած, մէկը միւսին  
վրայ զարսուելով, անոր պատերը կը կազմեն: Յիցե-  
բու վրայ բարձրացած այդ տնակը վայրենի հիւղակի  
մը տեսքը կը ներկայացնէր աւելի, քան դպրոցի: Բնա-  
կութիւններէ հետու, անտառին ծառերուն ու թուփերուն  
մէջ պահուրտած այդ անշուք շէնքը տաճարէ մը աւելի  
խորհրդաւոր ու օրբավայրէ մը աւելի նուիրական էր  
սակայն: Հակառակ ձմեռուան փուքին ու անընդհատ  
տեղատարափին՝ երեք գիւղերուն պղտիկները՝ կիտմերկ  
ու գունատ՝ հոտ կը վազէին կարգալ սորվելու:

Յարութիւնէն վերջը, թաթոսն էր հիմա անոնց ու-  
տուցիչը: Գիւղացիներուն կուռքն էր վարժապետը, զայն  
կը պաշտէին: Գպրուցին մէջ ոչ հինաւորց ֆալախան  
գոյութիւն ունէր, ոչ ալ պատմական թաթը: Զուարթ  
երիտասարդ մըն էր թաթոսը. ամենուն կը ծպտէր, ա-  
մենուն հետ կը խօսէր, ու իր ձայնին մէջ հայրական  
գորովի ներդրումիւ քաղցրութիւնը կար աւելի քան զիւ-  
ղական վարժապետներու կոպիտ սպանալիքը ու հպարտ,  
ինքնահաւան շեշտերը: Աղքատներու երդիքին տակ էր  
միշտ, հիւանդներու գլխուն վրայ պահապան հրեշտակի  
պէս կը հօկէր, աւետարանն ու սաղմոսը ձրի կը կար-  
գար անոնց, եւ ուր որ երթար, սրտապնդում ու սփոփանք

կը սփռէր իր շուրջը :

Յորեկուան ծանր աշխատութիւնները չէին ընկճեր զինքը : Անտառին մէջ կծկտող խեղճուկ շէնքին խորհրդաւոր մարդն էր ան : Քիւղացիները անոր վրայ ունեցած իրենց հաւատքը ծայրայիղութեան հասուցէր, սնահաւատութեան տարեր էին : Պատաւ զեղչուհիներ տարածայններ էին թէ Վարժապետը զիշերն ի բուն հըրեղէն հիւրեր կ'ընդունէր, որոնք ոչ մարմին ունէին եւ ոչ ոսկոր, որոնք աննիւթական, անշօշափելի էակներ էին, թաթոսին միայն ծանօթ ու տեսանելի սգիներ, զորս զիւղացիները պաշտպանելու կը գործածէր ան :

Յարութիւնին հեռանալէն յետոյ, թաթոսն ալ Դուրշունլուի հայ զիւղացիներու կեանքովը հետաքրքրուեր էր : Այդ կեանքը նախանձելի ու է կողմ մը չունէր : Կառավարութեան հարկահան պաշտօնեաներու հասուցած շարքներէն զատ, որոնք պաշտօնական գոյն ունենալով ու տարին տասերկու ամիս կրկնուելով զիւղացին հարկադրած էին բռնի համակերպիլ, Փաշազատէ կոչուած հողատերերու հարօտահարութիւնները չափ ու սահման չունէին : Հապա թիւրք հրոսախմբէրը, որոնք ամէն տարի նշանաւոր աւազակապետի մը թնկն տակ հաւաքուած՝ սանձարձակ կը շահատակէին :

Յարութիւն է թաթոս, բաւական երկար ժամանակ այդ միջավայրին մէջ ապրած ըլլալով, նշմարեր էին թէ հայ զիւղացին այդ երեք կարգի կեղեքիչներու հարօտահարութիւններէն աչք բանալու ատեն չունէր : Գիւղական կեանքի այդ մութ կողմը լաւ մը սերտեր էին, և՛ իրենց ուսումնասիրութեան իբր առաջին պտուղը՝ երևան էր եկեր Մինասը, իր փոքրիկ, այլ կտորիճ խումբովը, Բոնութեան վազը բոնութեամբ կասեցնելու, ետ դարձնելու համար : Միակ միջոցը, միակ դարձանքը, միակ պարտականութիւնն էր ատիկա : Եւ արդէն Մինասեան ասպատակային խումբին երևան գալէն ի վեր, զգալի փոփոխութիւն մը հաստատուեր էր հայ զիւղացիներու վիճակին մէջ : Ոստիկանները և ոստիկան զինուորները առաջուրէն աւելի բազմաթիւ կը միտային զիւղերուն շուրջը, սակայն իրենց շահատակութիւնները ինքնին բաւական սանձուեր ու իրենց կեղեքումի ախորժակները՝ ա՛լ առջի պէտ ազատ, համարձակ վարձութեամբ մը յազեցնելու անկարող՝ վարանոտ ու վախկոտ տրամադրութիւններու վիճակին մէջ զսպուեր էին : Ամէն վայրկեան Մինասին սարսափը ահաբեկ կանգ առնել կը ստիպէր զիրենց, ամէն պարագայի Մինասը կը տեսնէին իրենց հանդէպ, հոգեառ հրեշտակի պէտ ցցուած, ամէն ճամբու մէջ Մինասին կը հանդիպէին, անոր սպանական մտածումին կը բաղխէին, ամէն անիբաւ քայլի Մինասին վերահաս երևումէն, երկիւղէն կը շլատուէին, կ'անդամալուծուէին, անիկա խոչընդոտն էր որուն առջեւ կը խորտակուէին, Պատուհասը ուրկից կարելի չէր ճողոպրիլ, Արդարութեան

ահաւոր Բոնութեան որ անխուսափելի ու անդիմադրելի կ'իջնէր իրենց զլեւուն, զիշերուան մութին մէջէն կամ օր արևով :

Թաթոս, օրուան ծանր յոգնութիւններուն տակ ընկճուած, վառուող պուխարին քով նստեր կը մրափէր : Հողէ ճրակալին մէջ տեղաւորուած ձկնի ճրագը տրմոյն լոյս մը կը սփռէր իր շուրջը : Իր զէմքը սովորականէն աւելի տոգոյն էր այդ իրիկունը : Թաթոս ցորեկին սոսկալի տեսարանի մը ներկայ եղեր էր : Ոստիկանները, իր աչքին առջեւ, կացինի կոթով յծծեր էին Տօմպալախին Սարգիսը : Այս անգուժ արարեղն իր շիշերը ուժգնօրէն ցնցուեր էին : Արդէն կէս զիշերը մօտեցեր էր, բայց ինքը անկողին չէր մտած դեռ ու տեսակ մը թմրութեան ենթարկուած՝ կրակին քով նստեր մնացեր էր :

Թաթոս յանկարծ վեր ցատկեց իր մրափէն : Դուրսէն «Փառք ի բարձունս» ի մեղեգին, բարակ ձայնի մը ելելէն յետոյ, քանի մը անգամ կրկնուեցաւ : Յետոյ ջազաններու շարաւոր ունումը կարծես մէկէն զղրկացուց ազազուն շէնքը : Թաթոս՝ լնէ վարժուած էր այդ ձայներուն, սակայն անոնք անակնկալի մը տպաւորութիւնը կ'ընէին իրեն այս անգամ : Ականջներուն չհատալով, ոտքի ելաւ եւ դրան ճեղքուածքէն սկսաւ մտիկ ընել : Պահ մը սպասեց, բայց ձայն ձուն չէր ի գար : Եծու հովի մը բարակ սոսափիւնը ամայութեան մէջ խիտ մացաններու տերևաթափ ձախերն իրար կը ձաղկէր եւ անտառին աշնան երգը կ'ուլուէր անվախճանօրէն :

— Խօլական ցնորք մըն էր, ըսաւ ան ինքնիրեն, ձեռքը իր տենդոտ ճակտին դնելով : Մարդ ասանկ վայրկեաններու մէջ, իր ըղձացածը առջին տեսնալ կ'երևակայէ միշտ : Չէրքէզը չէր կրնար վերադառնալ իր ձայնն ու երգը երազիս մէջ լսած ըլլալու եմ, եզրակացուց թաթոս : Յետոյ կրակին մօտեցաւ, ուր քանի մը կոճեր՝ արդէն անցած՝ կը մխային : Սրանեղութեամբ մը իրարու վրայ դրաւ զանոնք : Քանի մը անգամ փչեց, բոցը բարձրացաւ, ու թաթոս, նոր արթնցածի պէտ, հազիւ զգաց թէ կէս զիշեր էր ու պէտք էր պառկիլ :

Հանուելու կը պատրաստուէր, երբ լուսութիւնը նորէն խզուեցաւ : Դուրսէն «Փառք ի բարձունս»-ը կրկին սկսաւ երգուիլ : Չէրքէզի ձայնին խազերը աւելի որոշ ու աւելի մօտէն հնչեցին այս անգամ թաթոսի աւականին : Ա՛ն էր, տարակոյս չի կար : Արտաքոյ կարգի բան մը պատահած ըլլալու էր անպատճառ, եթէ ոչ այս ատեն Չէրքէզը հոս չէր կրնար յայտնուիլ,

— «Ի մարդիկ հաճութիւն, քեզ ալ օրհնութիւն», ներս եկուէր, Չէրքէզ, ըսաւ թաթոսը, զուրբ բանալով :

Չէրքէզը մինակ չէր սակայն : Ամբողջ խումբն էր եկողը : Անտառին մացաններուն աակէն դուրս խուճեցին ամենքը մէկ :

Պահ մը վերջը, գեղական ողորմուկ գպրոցին երգիկին տակ, կրակին շուրջը բոլորուեր էին տոպատակները, մինչ պահակները դուրսը կը հսկէին: Իսկ Չերքէզը Քափու Քաբա ուղեւորներ էր յատուկ պատուիրակութեամբ մը:

Մինաս Ժանրամասնորէն պատմեց Լօղմանի և Կիւչիւկի Հասանի անձնատուր բլլալը, անոնց յանդուզն զիտաւորութիւնը և արդէն ետէ գործի սկսիլը:

Թաթոս Հիմակ կը հասկնար խուժրին այսպէս յանկարծական երևման պատճառը: Ան լուռ մնաց վայրկեան մը. միտներն ալ՝ իրեն ակնզէտ՝ կը լուին, ու միայն վառուղ կրակին ճարճատուները կը լուսէին ու բարձրացող բոցերուն լոյսը կը շողացնէր տոպատակներու կործանին վրայ խաչաձեւ ձգուած փամփուշտները, որոնք կարծես բնակարանին առժամեայ զարդերը կը կազմէին:

— Գեղքերու մէջինակ և յաջորդական կրկնութիւն, ըսաւ Վարժապետը, Թիւրքիան չի բարեկարգուիր, այդ իմ հաստատ համոզումս է. Թիւրքիան բարեկարգելէ առաջ պէտք է Թիւրքը բարեփոխել, իսկ Թիւրքը անուղղելի է...

— Այլ մենք ներկայի մարդիկ չենք, շարունակեց Թաթոս մենախօսելով, ներկային մէջ վայելչուի խորհիւն ապարդիւն է, ապագային կարապետներն ենք մենք: Հայութիւնը վերածննդեան շրջանէ մը կ'անցնի, Հայուն արութեան ու զոհաբերութեան չափէն կախում ունի իր ապագան: Երէկ Շիրին Ալին էր, որուն զէմ կոտելու ստիպուած էինք, այսօր Լօղմանն ու Կիւչիկի Հասանը, վաղը ուրիշ մը, այս պզտիկ կեանքերը սոսկայն մեծ կոտելու մերձեցումը կը նախաձայնեն...

— Կը տեսնե՞ս մեր թիւր Թաթոս, ընդմիջեց Կապետ զառն շեշտով մը ու ձեռքը պարզելով, մէկ, երկու, երեք և շատ շատ տասը, բայց այսօր հայերը հազարով կը հաշուին այս դաւառին մէջ:

— Կոիւի համար պատրաստ ու ամբարուած ուժ փնտռել ներկայիս հայ զիւղացիներուն մէջ ինքնին մեծ սխալ մըն է: Գիտե՞ս, Կապետ, թէ մեր ստրկութիւնը ոչ օրերով կը հաշուելուի եւ ոչ ալ տարիներով, հապազարերով, հարիւրուոր տարիներով...

Կապետ, Մինաս, Յովհաննէս ապշած Վարժապետին երեքը սկսան նայիլ: Անոր վերջին խօսքերը անհունութեան պէս անըմբռնելի խորհուրդ մը պարզեցին իրենց մտածումը լեռներու զազաթէն նետած ու կոտիլ միայն սորված ափսոսանքուն միամիտ ու կտրիճ նայուածքին առջև: Իրենց ցեղին պատմութիւնը չէին ճանչնար անոնք, Ամէն բան ներկայով կը չափէին եւ՝ որովհետեւ հպատակութեան ստրուկ ոգին անոնց ներսիցին գոյութիւն չունէր ու բռնութիւնը կ'արհամարհէին՝ իրենց փափաքն էր, որ ամբողջ հայ ժողովուրդը իրենց պէս

զգար՝ ամէնքը մէկ՝ զէնքով արտայայտէին այս զգացումը: Տխմար ու ապշեցուցիչ բան մըն էր մեր լիոնցիներուն համար, ստորին նկատումներու հպատակելով գոյու տալ այնպիսի մարդոց, որոնք քաջերու արհամարհանքին իսկ արժանի չէին:

Քանի մը տասնեակ գիւղերէ բաղկացած շատ հին գաղթականութիւն մըն էր, որ հաստատուած էր Չարշապայէն դէպի հարաւ Եւջիլ Ըրմագի օձանգակներու ձորահովիտներուն ու անտառապատ լեռնագաւառին մէջ: Պարերու ընթացքին՝ այդ փոքրիկ հայ գաղութը կրցեր էր սակայն պահել ինքզինքը օրը օրին աւելցող ամէն տեսակ հալածանքներու զէմ: Առաջ լազ բնակիչներ էին, որ ընդդիմագիւր ուժը կը կազմէին, սակայն Չերքէզական գաղթականութիւնը սկսելէն ի վեր, Չարշապայան ամբողջութեամբ ողողուած էր այդ կովկասի լեռնականներով, որոնց համար գողութիւնը առաքինութիւն և մարդասպանութիւնը սովորական զբօսանք մըն էր: Այդ անձուկ շրջանին ալ բուռ մը հայերը նորէն կրցեր էին իրենց անկախ դիրքը պահել, գողութեան՝ գողութեամբ պատասխանելով, հարուածին՝ հարուած հասցնելով, իրենց գոյութեան կոիւր աճաբար շարունակելու էին: «Աչքի տեղ աչք, ակոյի տեղ ակոյ»ն իրենց դաւանանքին ամենատարրական սկզբունքն էր, իրենց մարմնին եւ հոգիին հետ շաղուած, խմբուած ժառանգական դարձած էր ալ ապօտամբ ոգին ու զուլէ զուակ փոխանցելով մինչեւ նոր սերունդին եկեր հասեր էր ու անոր երիտասարդ արիւնին մէջ կ'եռար հիմա: Ու ամբողջ Հայութիւնը իրենց վրայէն կը չափէին անոնք: Անկարելի կը նկատէին Հայութեան մէջ անհաշտ ու հակառակ ձգտումներ, բաժան բաժան զգացումներ: Կ'ըմբռնէին տիրող կառավարութեան ճնշող, փճացող լուծը, հարկերու յաւելումներ, անօրովոր տուրքեր իրենց անտեսական կեանքին մէջ աւերումի գոնեք բացեր էին, սակայն երբ ազգային մահու կամ կենաց խնդիր հասեր էր, հոտ թաքուն գայրոյթը բուռն ու աբղարացի ընդվզումով մը երևան էր եկած, ու անոնք իրենց զէնքին էին պլլուած, ինչպէս մոլեռանդ աւստրիականը իր խաչին: Ու կ'ուզէին, կը տենջային որ ամէն հայ զէնքի մը կ'առչէր, իրենց պէս, ուրկէ անդին փրկութեան, ազատութեան ամէն ակնկալութիւն անհնարին ու անիմաստ կը համարէին: Եւ երբ շատ քիչերու կը հանդիպէին, որոնք կոիւի հոգիներ ցոյց կուտային առիկա կը գայթակղեցնէր ու կը տրամեցնէր զիրենց ու անոր համար էր մանաւանդ որ Վարժապետին խօսքը զիրենց կը սահմակէր ու շփոթ ու պիտիո՞մ մտածումներ կը թելադրէր իրենց:

— Հինգ հարիւր տարիներով կը հաշուելուի մեր ստրկութիւնը կրկնեց Թաթոս հառաչելով:

— Էլ այդ հինգ հարիւր տարուան միջոցին հայերը բնաւ չեն կոտուած իրենց ազատութեան համար, հարցուց Յովհաննէսը:

— Կուսած են, բայց այդ կոհները երբեք չեն ունեցած ազգային անկախութեան գերագոյն իտեալը, երբեք չեն վառուած, առաջնորդուած ազատութեան այրող ու ամենի պայակէն: Կոյր ու տատամտեալ անգիտակցութեան անհուն շրջան մըն է եղած ստիկա, թշուառութիւնը Հայուն ոսկորներուն ծուծն էր թափանցած, առանց զեռ կարենալ հոն արծարծելու ըմբոսառացւածին կրակը: Ստրկութիւնը, գլխիկոր ու տափակ հնազանդութիւնը մեր ժառանգական ախտերէն գլխաւորն էին դարձեր: Սակայն այսօր կ'ըմբռնենք մեր գրութիւնը, և անարդարութեան զէմ բողոքելէն ալ անդին անցած ենք, զենքով արդարութիւն ընել ելած ենք մենք մեզի:

— Մենք կը մեռնինք, սակայն մեր մեթոթարութիւնը, միջամտեց Յովհաննէս անձկագին:

— Մեր մեթոթարութիւնը մեր գիտակցական մահուան մէջն է: Լկզային փրկութեան ազնիւ ու բուռն զգացումէն հրժտուած զէպէ ազատութիւն կը վազենք հս ի վն: Ափ մը մարդիկ ենք թէեւ, բայց արդարութեան կոհն է որ կը մղենք ու կտրիճեցրու համար կոհին մէջ մեռնիլը իրենց փառքերուն շեմագոյնը կը կազմէ, հանրութեան սիրտը ասոնց տապանաբարը կ'ըլլայ ու ու անոնք կ'անմահանան ամբողջներու երախտագէտ ու տաճարակիր հոգիին մէջ:

— Շիրին Ալիի մը սպաննութիւնը իրաւ է թէ նիւթապէս վնասեց, բայց մեծ եղաւ մեր բարոյական յաղթանակը: Ճանիկի սանճախի լեռներուն մէջ կորսուած աննշան գիւղացիներ էինք մենք, մեր պոյութիւնը, մեր զիւղերուն անուններն անգամ անձանօթ էին աշխարհին: Այսօր սակայն ամէն կողմէ մեզ կը զիմեն, կը քաջալերեն ու կ'օգնեն մեզի, արովհետեւ՝ թէպէտ ազէտ ու զեղջուկ մարդիկ՝ մեր հաւաքական արժանապատուութիւնը պաշտպանելու համարձակութիւնն ունենալով՝ կարող եղանք հանրութեան սրտէն արդեգրուելու:

Յանկարծ ներս մտաւ Չերքէզը: Գափու Գաեաէն կը գոհնար ան, ուր գացած էր՝ տեղային հասարակութեան մէջ տարաձայնուած լար մը ստուգելու: Մէթալիկը, որ արդէն բարի համբաւ չէր վայելեր ու մոռմանցեալ մը ունէր, հայ հանրութեան կասկածը սկսած էր հրաւիրել իր վրայ: Միանալով տեղային քրիստոնէի, Միսասեան խումբին կը հետեւէին զիշեր և ցորեկ: Ատկից զատ Չարչամպայի կազմակերպութեան հայ լրտեսները անոնց երկուքին ալ Պին—պաշիին տունէն էլլելը տեսեր էին: Իմանալով որ Լօղմանը Գափու Գաեա եկած ու Սոզմանի տունն էր իջած՝ Չերքէզը գացեր էր իրզդութիւնը ստուգելու: Անկից կը դառնար հիմա:

— Խեր է իշալահ, ըսաւ թաթուրը, տեղ ցոյց տալով Չերքէզին վառուող պուշարիին խէչ:

— Լօղմանը Գափու Գաեա է, պատասխանեց Չերքէզը:

Գէզը: Ութը հօգի են ամենքն ալ մարթններով գինուած, եւ անձաւ տեսայ զիրենք, կեր ու խումով զբաղած՝ զլուխն պէտք եղածէն աւելի տաքցուցած՝ իրենց հին անտապ կեանքին անձնատուր ելեր էին, երբ ես գիւղը թողուցի: Կերեալ թէ վաղը՝ ատուն կանոխ՝ զիմացը Չաթախ պիտի անցնին, կը կարծեն թէ խումբը հոն է:

— Ատեկա կենսական լուր մըն է, ըսաւ թաթուրը, հիմա վստահ զիտնալով թէ մեզի հետեզներ ունինք՝ անոր համեմատ կը պատրաստուինք: Մարդուանէն զեռ լուր մը չի սուիր, Չերքէզ, հարցուց թաթուրը, անոր գառնալով:

— Գալէս ի վեր չունչ աննշու ժամանակ ունեցա՞յ որ: Բանի օրէ ի վեր Չարչամպա կը մնայի Լօղմանի անձնատուր ըլլալը հաստատելու համար: Երէկ կէս զիշերին վերագարձայ եւ ահա այսօր կէս գիշեր է, որ ձեզի տեսնելու միջոց կունենամ, Գափու Գաեաի մէջ անցած գարձածը ստուգելէս ետքը:

— Հիմա կարգը Մարգուանին է, ըսաւ Մինաս, հրացանը զրկին մէջ տեղաւորելով:

— Ճիշտ անցեալ շարթու հոն էի, խօսք առաւ Չերքէզը, այդ օրը սակայն անկարելի էր մարդ տեսնել: Յարութիւնին տեղը չգիտէի ու առաջնորդ մը չունէի որ զիս հոն տանէր: Կիրակի օրը միսիծնարնեբու գուրէնը գացի մեր հայրենակից Գէորգին հանդիպելու, որուն միջոցաւ վստահ էի Յարութիւնը գտնելու, եւ գաայ: Միջահասակէն քիչ մը կարծ և կարճէն քիչ մը երկար քառասունը հինգ տարեկանի մօտ մարդ մըն էր ան, մինչև կրունկները ձեռոյ վերարկու մը հագած էր, օրուն վրայէն իր բրդոյ մօրուքով զլուրը կը ցցուէր: Առաջին անգամ տեսնելուս՝ ես ճանչցայ Գափու Գաեաի հին քարոզիչը: Գէորգի ներկայացնելէ ետքն էր որ ան զիս ճանչցաւ: Այլալիցաւ, մեր զիւղերուն ու անոնց բնակիչներուն վրայ այնքան հարցումներ ըրաւ որ չգիտէի ո՞ր մէկուն պատասխանելու: Երկու տարի միայն կեցած էր մեր կողմերը, բայց կարծես հոն ծնած ըլլար, այնքան կարօտը կը քաշեր զիւղացիներուն: Իրեն պարզեցի ինչ նպատակով գացած ըլլալս, կացութիւնը իսկութեամբ մանրամասնօրէն յայտնեցի: Առաջին անգամ քիչ մը կասկածով խօսեցաւ, բայց հետզհետէ մտերմացանք եւ վերջ ի վերջոյ խօստացաւ մեր գրութիւնը ներկայացնել պէտք եղած տեղը, խոստացաւ ինծի ամէն ջանք ի գործ դնել զենք ու ազգամթերք ձեռք ձգելու մեզի համար: Թաքստոցներ ալ պիտի պատրաստէ ու պաշարի համար կանոխէն զրամ պիտի հաւաքէ, որպէսզի այն կողմերը ապաստանելու չենդուրինք: Խոկ տեղական ընկերութեան օրոշումը քանի մը օրէն մեզի պիտի հաղորդէ Պաղտա սար անուն Տրապիզոնցի երիտասարդի մը միջոցաւ, որ այդ կողմերը փախստական կը պատի: Ահա՛ ինչ

որ Մարգուանի վրայով կրնամ ըսել ձեզի, վերջացուց  
Չէրբէզը, ազատ ու երկար շունչը քաշելով:

— Բարի լուրեր են, ըսաւ Թաթարը, երանի թէ  
մտորէն իրագործուին, Լոզմանի անձնատուր ըլլալը  
մեր գործունէութեան մէջ բաւական փոփոխութիւն պիտի  
մտցնէ: Այլ չենք կրնար փակուած մնալ Գուրչունչուի  
լեռներուն մէջ: Անակնկալի մը առջեւ կը գտնուինք հի-  
մա, որ մը չէ որ մը Լոզմանի հետ ընդհարում մը ան-  
խուսափելի է, այդ անորէնը այնքան ծանօթ է այս լեռ-  
ներուն, որքան գուց. նոր ապաստանարաններու ու թա-  
քըստոցներու պէտք ունինք եւ ատոնք ալ միայն Տալշան  
Տաղիի մէջ կարելի է գտնել:

— Եթէ Մարգուանցիք մեզ օգնեն, այդ խնդիրը  
ինքնին լուծուած է, միջամտեց կապեալ:

— Եւ ատոր համար հարկաւոր է, որ Չէրբէզը կրկին  
Մարգուան ուղեւորուի, վրայ բերաւ Թաթար, պէտք է  
Յարութիւնին հետ կրկին տեսակցի ու մեր ուժը և  
զրուիւնը ամբողջապէս անօր ծանօթացնէ: Եւ որով-  
հետև մեր ներկայ վիճակը շուտով վերջանալու երևոյթ  
չունի պէտք է որ մեր գործունէութեան շրջանը ընդ-  
լայնենք, այդ լեռներէն գուրս ելլենք, ու մեր կռիւն  
ձայնը ուրիշ շրջաններու և ուրիշ անտառներու մէջ ալ  
պէտք է որ արձագանքէ: Ո՞վ գիտէ, թերևս ուրիշներ  
ալ արթննան մեր զէնքերուն շաչիւնէն ու գան մեր  
շուրջը բոլորուին:

— Այս առտու իսկ Չէրբէզը պէտք է մեկնի. ըսաւ  
Մինասը, վաղը կամ միւս օր, ընդհարում մը հաւանա-  
կան է: Այսօր Գափու Գաեա, Ուլու Փունար, վաղը  
Գապա Ճէվիզ, միւս օր Աղճա Կիւնա Լոզմանին ու իր  
խուժքին զոհ պիտի ըլլան: Գէթ զիւզացիներուն խնա-  
յելու համար այս գործին անմիջական կարգադրութիւնը  
անհրաժեշտ է:

— Ամէն պարագայի մէջ ջանալու ենք, որ վաղահաս  
ընդհարումներէ խուսափինք և որքան կարելի է մեր ուժերը  
խնայողութեամբ գործածենք:

— Անխուսափելիէն խուսափել անկարելի է, Թաթար, ո՞ր  
գոչեց Մինասը, մարդիկը արդէն հեռքերնուս վրայ են  
ու իրենց առաջնորդ ունին նոյն իսկ զիւզացիները: Մե-  
թալիկը կը ճանչնաս, մարդ մը որ իր խորամանկութեամբ  
օստանային տեղն անգամ կրնայ գտնել:

— Մանաւանդ որ Քզիր Սողոմոնն ալ իրեն ընկեր  
առած է, աւելցուց Յովհաննէտը:

— Մտածել որ այդ երկուքն ալ Հայ են, հառաչեց  
կապեալ, օրտաբուս ու վիրաւոր շեշտով մը:

— Յեղափոխական գործունէութեան մէջ մեզի թըշ-  
նամացող ու մեր դէմ զաւաճանող հայերը աւելի վտան-  
գաւոր ու աւելի ցածոգի են քան թիւրքը, յարեց Թաթար,  
Մեթալիկ ու Սողոմոն հրացանի՛ բռնուելու են, երբ  
կարգը գայ:

Պահակներէն մէկուն խորհրդաւոր ու զիւ շփոքը

վերջ կրաւ այս խօսակցութեան: Կապեալ իր ձեռքը  
մարթինի հրացանին բլթակին կրաւ, Յովհաննէտը պա-  
տուհանին առջեւը ցատկեց, իսկ Մինասը ու Չէրբէզը  
կայծակի արագութեամբ գուրս վաղցին ու մացանե-  
րու տակ նետուելով սկսան ահանջ տալ: Սուրցը  
կրկին փշեց: Մինասը իր կողմէն ուժգնակի շփոքով մը  
անդրադարձուց: Քանի մը վայրկեան հաշիւ անցած՝ մութ  
զիշերին մէջ երկու ստուերներ սկսան ծառանալ ու զըպ-  
րոցին մօտենալ: Ուրիշ մը, քիչ հեռուէն, անոնց կը  
հետևէր:

Սուրցը բարեկամական էր:

Մինասն ու Չէրբէզը, իրենց Թաքստոցէն գուրս  
վազելով, դէպի երրորդ ստուերը յառաջացան:

— Օվան, ձայն տուաւ Մինասը:

— Ես եմ, Մինաս, պատասխանեց Օվանը, Ուստա  
Մակարը, իր ընկերոջ հետ միասին հոս առաջնորդեցի,  
Վարժապետը տեսնել կ'ուզեն, կարեւոր լուրեր ունին ե-  
ղեր անոր տալու:

Ուստա Մակարի անունը Չէրբէզն ու Մինասը հան-  
կարտեցուց:

Պահակը մացառուտին մէջ անհետացաւ: Մինաս  
ու Չէրբէզ, Ուստա Մակարը ներս առաջնորդեցին, ան-  
ծանօթը լոյս աչքով տեսնելու անզուսպ տենջանքով մը:

(Շարունակելի)

ԹԻՒՐԳԻՈՑ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

Սուլթանը օրէ օր աւելի կը տրամադրի եւրոպա-  
կան ազդեցութիւնը թուրքիոյ մէջ ջնջելու: Եւրոպա-  
կան մամուլը այս խնդրով բաւական կը զբաղի: Կարգ  
մը դէպքեր սուլթանին գազտնի զիտաւորութիւնը երե-  
ւան բերին:

Ոչ ոք մոռցած է եւրոպական թղթատուններու  
խնդիրը: Սուլթանը զրաւել տուաւ Եւրոպայէն եկած  
պայուսակները և փորձեց փակել տալ օտար թղթա-  
տունները: Իրաւ է որ չյաջողեցաւ իր խորհուրդնե-  
րուն մէջ, բայց մահաւանդները տեսնել թէ խալիֆը  
վերջապէս հակաքրիստոնէական ուղղութեան կը հետևի:

Միջազգային առողջապահական ժողովին գործերուն  
մէջ սուլթանին ոտնձգութիւնը նոր փորձ մը եղաւ եւ-  
րոպական միջամտութեան դէմ: Այդ մարտին 1866ին  
հաստատուեցաւ ՅՏԻ մեծ քոլերայէն ետքը, և զեօպան-  
ներուն իրաւաօնութեան ներքեւ է: Ժանտախտին երևա-  
նը առթիւ սուլթանը ուզեց որ ինք հրամաններ տայ և  
փոփոխէ միջազգային ժողովին որոշումները: Խնդիրը

շատ ծանր կերպարանք առաւ պահ մը:

Կ. Պօլսոյ քարափները, որոնք ֆրանսական ընկե-  
րութեան մը միջոցաւ շինուած են, մեծ գծութեան  
տեղի տուին սուլթանին և ֆրանսական դեպանատան  
միջև: Սուլթանը կ'ուզէ զանոնք ետ առնել: Ինչպէս  
օտարազգիներու ձեռք ձգէ իր մայրաքաղաքին նաւ-  
հանգիստը, ուր ճամիւները շատ են:

Մոլեռանդական ուրիշ ցոյց մըն ալ: Սուլթանը ար-  
գիլեց որ օտարուհիներ այլ ևս չգործածուին մահմետա-  
կաններու տունները: Յայտնի է թէ առաջնակարգ մահ  
մետական ընտանիքներ իբր վարժուհի, խնամակալուհի  
կը պահեն անզլիացի, գերմանացի և մանաւանդ ֆրան-  
սացի աղջիկներ և կիներ: Ասոնց թիւը վերջերս շատ-  
ցած է: Սուլթանը կասկած ունի որ գրունց յեղափո-  
խական հրատարակութիւններ ատոնց միջոցաւ կը մտնեն  
Պօլիս: Ո՛ր ապաւին երիտասարդ-թուրքերը Բարիզ են:  
Իրատեով մը բացարձակապէս արգիլուեցաւ մահմետա-  
կան տուններու մէջ օտարուհիներու պաշտօնավարու-  
թիւնը:

Իր այս քաղաքականութեամբ սուլթանը կը յուսա-  
թիւրք ժողովուրդին ուշագրութիւնը ներքին բարեկար-  
գութեանց խնդրէն հեռացնել, համոզելով զանոնք թէ  
ինքը մահմետականութեան արդիւնքն է Արևմուտքի  
կեպտուրներուն դէմ: Թիւրքերը միշտ գէշ աչքով նայած  
են եւրոպացիներուն տրուած մենաշնորհներուն: Բիւ-  
րաւոր թուրքեր հրճուանցով պիտի ողջունեն իրենց  
երկրին մէջ եւրոպացիներուն դէմ «սանճաղը շէրիֆի»ին  
բարձրացումը: Սուլթանը, որ այս ամէնը գիտէ, կը  
չանայ իր զիրքը զօրացնել, փայփայելով իր մահմե-  
տականներուն մոլեռանդութիւնը:

Բայց վերջը: Բազմաթիւ թերթեր կը զիտեն թէ  
սուլթանը ա՛լ չափը անցնելու վրայ է. ու կրնան ներկա-  
յանալ այնպիսի պարագաներ, որ այլ ևս սուլթանի  
հպատակներուն անհնարին ըլլայ իրենց տէրը փրկել  
իրենց սիրովը:

Վիեննէր թակապաթ զիտել կուտայ թէ սուլթանը  
նշանաբան ընտրած է իրեն «Թիւրքիան թիւրքերուն  
համար» ուտի և կը ձգտի իր պետութիւնը կամաց  
կամաց զատարկացնել եւրոպացիներէ: Այսպիսի քաղա-  
քականութիւն մը սակայն շատ վտանգաւոր է Թիւրքիոյ  
համար, որուն բաժանումին ժամը կ'արագացնէ:



Բայց սուլթանը ինչ ընէ: Անտանիլի կացութեան  
մը մատնուած է: Եթէ զեռ յենարան մը ունի ան ալ

պէտք է իր ժողովուրդին մէջ փնտռէ, թէ ևս յուսահա-  
տութեան յենարան մը: Իր դէմ յարձակումը օրէ օր  
կը սաստկանայ ու դաւադրութիւնը այլ ևս Երւսաղիմ պա-  
լատին մէջն է: Պէտք է որ ժամանակ վառտի: Յունիս  
15ի հրդեհը ահաբեկեց սուլթանը. երկու ամսուայ ջըն-  
նութենէ յետոյ, պալատական հարիւրաւոր պաշտօն-  
եաներ, որոնց թիւը 700ի կը հասնի, ու չորս հատ ալ  
հանքմ, ամենքն ալ թիւրք շոգնուաւով մը Եթմէն աք-  
սորուեցան—եթէ կէս ճամբան չմնան: Պէտք է ընդու-  
նիլ թէ դաւադրութիւնը շատ մեծ ըլլալու է որ այսքան  
բազմաթիւ անձեր կը դատապարտուին: Ո՛վ գիտէ ինչ  
մեծ աղմուկ յարոյց թրքական աշխարհին մէջ այս Երւսա-  
ղի հրդեհին գործը իր բոլոր հետեանքներովը:

Երիտասարդ-թիւրքերը թէև բան մը չեն ըրած  
գործնականապէս, բայց իրենց անունն իսկ սարսափ կ'ազ-  
դէ սուլթանին, որ եպարգոսական հրաման մը հանել  
տուաւ և արգիլեց «երիտասարդ-թիւրք» բառերուն ար-  
տասանութիւնը: Վա՛յ անոր, որ սխալմամբ այդ բառը  
բերնէն գուրս սպրդեցնէ:

Իրամական ահեղ տագնապը օրէ օր կը սաստկա-  
նայ, թիւրքերը այլ ևս քրիստոնեաներուն վրան ալ կո-  
ղուտելու բան չեն կրնար գտնել: Չեն կրնար քրիս-  
տոնեաները ուտել որ ուտեն: Գազաններուն մէջ էն  
անպետեաններն են թիւրքերը: Ո և է զազան մարդ մը եթէ  
փարատէ, կամ ուրիշ կենդանի մը, զայն ուտելու նպա-  
տակաւ է: Ինքնարդարացման մեղմացուցիչ պարագայ  
մը: Թիւրքը մարդատու է, բայց ոչ մարդակեր: Ստակ  
չիկայ: Կ. Պօլսոյ զօրանոցներուն սպաները պատերազ-  
մական գործերու նախարարին աղերսագիր մը տալով  
խնդրեցին որ իրենց յետնեալ ամսականներուն գոնէ  
մէկ մասը վճարուի, ապա թէ ոչ բոլորովին իրենց  
պարտապահանջներուն եւ փոխատուներուն ճիրանները  
կ'իյնան:

Պետական պաշտօնեաներ, որոնք երկար ատենէ  
ի վեր ամսականի երես տեսած չունին, այլ ևս յուսա-  
հատած՝ շանացին Մեծ Եպարգոսին բնակարանը մտնել  
և իրենց գանգատները յայտնել, սակայն ոստիկանու-  
թիւնը վրայ հասնելով արգիլեց ու պարսղուիններն ալ  
բռնեց Քոբը—Ասիա աքսորեց, որովհետև ամսականին  
խնդրել համարձակած էին:

Նմանօրինակ ցոյցեր տեղի ունեցած են ուրիշ կողմեր  
ալ, մասնաւորապէս Սելանիկ, ուր պաշտօնեաները  
փողոցներուն մէջ մեծ անկարգութիւններ առաջ բե-  
րած են:

Որքան որ եւրոպացիները վարժուած են ամէն տե-  
սակ այլանդակութիւն լսել թիւրքիոյ մասին, բայց այս

ամսականի խնդիրները զիրենք կ'ապշեցնեն, մինչև իսկ անհաւատարի կը թուին:

Մինչ այս մինչ այն, Պօլիս ստիպողական վճարութեան ընկիւղ, ու 700,000 ոսկիի անմիջական պէտք կայ: Ելմտական նախարարութիւնը գլուխը ամէն կողմ կը զարնէ, բայց մինչև վերջին պահուն ո՛չ մէկ տեղէ օգուտ մը տեսած էր: Ամէն տեղէ մերժողական պատասխան կը տրուի ու է փոխատուութեան մը համար:

\* \* \*

Դուրս ելլելով Կ. Պօլսէն, ահեղ վիճակ մը կը պարզուի ամէն կողմ: Եւրոպական Թիւրքիոյ մէջ տագնապը կը սաստկանայ:

Նորագոյն շուրքերը կը հաղորդեն թէ Պուլկարեթիւրք սահմանազխին վրայ, Հարմանլը, ջոկատներու միջև ընդհարումները արդէն սկսած են ու Էտիրնէէն հապճեպով զինուոր զրկուած է Կոստին վայրը:

Պուլկարի մէջ Մակեդոնական յուզումը կը շարունակէ: Սարաֆոֆի և ընկերներուն դէմ բացուած գատին ելքը, թէև կրնար գուշակուիլ առաջուց, ամենամեծ սպաւորութիւն առաջ բերուած ամենուրեք: Ամբաստանները մեղադրուած էին իբր մեղսակիցներ այն յեղափոխական սպանութեանց, որոնք Սելանիկի և Պուրէզի մէջ տեղի ունեցեր էին: Բոլոր վկայութիւնները ամբաստաններուն դէմ էին, բայց գատարանը զիրենք անպարտ արձակեց:

Այս վճիռը կը հաստատէ թէ Պուլկարիս որսող ու հողուով Մակեդոնական Գօմիթէին հետ է: Միանգամայն ակնբեր կը տեսնուի թէ Պուլկարիոյ իշխանութիւնը պիտի չուզէ, եւ եթէ ուզէ իսկ, պիտի չկարենայ զսպել Մակեդոնական շարժումը, որ օրէ օր աւելի սպառնալից երևոյթ կ'առնէ:

Երկտըը այս մեծ վտանգին հանդէպ ինքնապաշտպանութեան ապահովութիւնը փոխանակ Մակեդոնիոյ մէջ փնտոելու, նորէն կը դիմէ իր աւանդական բարբարոսութեանը:

Սպանալիքը հիմակ Սելանիկէն ասդին է, Պօլսէն տաս ժամ անդին, Էտիրնէ, ուր Սարսաֆի զրուցիւնը կը տիրէ: Գուսակալը հրաման տուած է որ զինուորները երթան նստին ջրհաստակից բնակած բոլոր զիւղերը ու յեղափոխական ձգտում ունենալու կասկածուած ու եւ է անձ ձերբակալուի և բանտարկուի: Կրնանք ենթադրել թէ ինչ վիճակ կրնայ ըլլալ: Չինուորական իշխանութիւնը ոտականներու հետ միասին իրենց տուներէն բռնի դուրս բաշեցին հարիւրաւոր կիներ, տղաքներ եւ քաղաքացիներ Փոքր-Ասիա. ասոնցմէ ոչ մին մտքէն անցուցած էր քաղաքական գործի մը մէջ մտնել: Աքսորեալներէն ոչ սքզրտէ թէ ինչու կ'աքսորուին:

Վերջին օրերս հինգ հարիւր պուլկար քահանայ եւ

վարժապետ Էտիրնէ տարուեցան: շրջակայ գաւառակներէն: Ասոնք Պուլկար-Մակեդոնական Գօմիթէին իբր համակրողներ կ'ամբաստանուին: Ամէնքն ալ Փոքր-Ասիա քաղաքուեցան: Ասոնց կնիկներուն եւ տղոցը արտօնութիւն շտրուեցաւ իրենց ընկերանալու. խեղճ, անոք անօգնական վիճակի մէջ կը թեան:

Նմանօրինակ կացութիւն մը ստեղծուած է եւ Սելանիկ: Վերջերս քառասուն առաջնակարգ Մակեդոնացի պուլկարներ ձերբակալուեցան յեղափոխական գաւաղութեան ամբաստանութեամբ, եւ նետուեցան Պոտրում-Քալէի ահարկու բերդը: Չերբակալեալներուն մէջ են բժիշկ մը, տասնըհինգ յունապաւան քահանայ, տասնը վեց վարժապետ, եւ ութը առաջնակարգ վաճառական:

Այս ձերբակալեալները շղթայակապ տարուեցան, հարիւր զինուորի հսկողութեան ներքեւ: Վեց պահապան երկայն խարազաններ բռնած կը ծեծէին տարաբաղդ շղթայեալները: Չինուորները մերթ ընդ մերթ իրենց հրացաններուն կոթովը կը ծեծէին զերբակալեալները:

\* \* \*

Ալպանիոյ մէջ խռովեալ վիճակը կը շարունակուի: Աւստրիական թերթի մը ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցեր է Ալպանիական շարժումին պարապլուս Սահիպ փաշայի հետ, որ իրեն յայտարարած է թէ Ալպանիացիները ուրիշ ու եւ է պետութեան մը հպատակիչ չեն ուզեր: Ուժգնապէս պիտի դիմադրեն ու եւ խորհրդի, որուն նպատակը ըլլայ Ալպանիան Աւստրիոյ կամ իտալիոյ մէկ նահանգը ընել:

Նաև երբեք պիտի չուզեն միանալ Յունաստանի հետ. կամ բոլորովին անկախութիւն, կամ ինքնավարութիւն սուլթանին անուանական զերբիշխանութեան ներքեւ:

Վերջին շուրքերը սակայն կ'իմացնեն որ թերևս Ալպանիացիներու և Գարատաղցիներու միջև ընդհարում մը տեղի ունենայ: Նիքոլա իշխանը Դրան իմացուցած է որ 20,000 Ալպանացի սահմանազուլուր հաւաքուեր են, ու Գարատաղի դէմ յարձակուի կը պատրաստուին, բայց Գարատաղցիք ալ գիտեն թէ ինչ ընդունելութիւն պիտի ընեն:

Այսպէս Ալպանիա, Հին-Սերպիա, Պուլկարիա, Մակեդոնիա, Սերպիա, Գարատաղ ամէնքն իրարու դէմ են: Թիւրքը անսայթաք ուղղութեամբ կը շարունակէ կոտորածի, հարստահարութեան իր հնաւանդ քաղաքականութիւնը, որ երբ կը սաստկանայ գուշակութիւն մըն է մօտալուտ պատահարներու:

Քան մը կը պատրաստուին երկելը կը տիրէ: Սեպտեմբերի մէջ Զարը, Վիլհելմ կայսրը, Անգլիոյ թագաւորը Գիլ տեսակցութիւն մը պիտի ունենան, և տիրող ընդհանուր կարծիքն է թէ Արևելեան խնդրին արդի

վիճակը իրենց որոշումներուն առարկան պիտի ըլլայ: Չարը միանգամայն պիտի այցելէ Քրանսա եւս:

Իսկ իտալիա գլուխը վեր վերջուցած, կը յայտարարէ որ երբեակ նիզակակցութեան վերանորոգումին համար պայման կը դնէ Արեւելի մէջ իտալիոյ իրաւունքներուն և շահերուն երաշխաւորութիւն տրուելը: Կուզէ որ պալքաններուն մէջ իտալիոյ շահերը պաշտպանութիւն Աւստրիոյ եւ Գերմանիոյ կողմէն, ու միանգամայն Ղարպ Թարապուլուսի վրայ իտալիոյ իրաւասութիւնը ճանչցուի: Բայց Թիւրքը: Ո՞վ մտքէն կ'անցնէ թէ յշտնջենական տէրն է անիկա:

Նորութիւններու, ահեղ նորութիւններու Թերեւս քիչ ժամանակէն հանդիսատես ըլլանք:

### ՍԱՍՈՒՆԸ

Նոր կեանքի վերջին թիւը մամուլին յանձնուած էր արդէն, երբ Սասունի վիճակին վրայ կտրուկ ու տազնապալի լուր մը հասաւ մեզի: Առանց տարապայման պատրանքներ սնուցանելու զիւրանագիտական կանխարգել միջամտութեան մը վրայ, պարզապէս ազգարարելու և բողոքելու անդիմադրելի մղումի մը հպատակելով, փութացինք հետևեալ ծանօթագիրը ուղղել անմիջապէս Մեծ-Պետութիւններու Արտաքին Գործոց նախարարներուն ու անոնց Պոլսոյ զեսպաններուն:

«Վսեմափայլ Տէր,

«Հնչական Քօմիթէն կը համարձակի Ձեր Վսեմութեան հաղորդել հետևեալ լուրը, որ իրեն հասած է ամենավատահելի աղբիւրէ մը.

«Թիւրք կառավարութիւնը կը բռնադատէ Սասունցիները ձգել իրենց գիւղերն ու լեռները և կը ստիպէ զանոնք Մշոյ գաշտին մէջ բնակելու: Սասունի բնակիչները կ'ընդդիմանան այս կամայական հրամանին: Ամբողջ Սասունը, այս պահուստ, պաշարուած է թիւրք զինուորներով ու ջիւրա համիտիներով: Կողոպտուած արդէն սկսած է: Չարքը վերահաս է: Օգնորհե՛ն:»

«Անձկութեան մէջ եղբայրներու այս կոչին ի լուր, Հնչական Քօմիթէն չի կրնար ինքզինքը արգելիլ մարդկութեան երեսին պոռակէ շախշախիչ պատասխանատուութիւնը որ կը ծանրանայ Մեծ-Պետութիւններուն վրայ, որոնք՝ առաջին արիւնատուութեան պահուն՝ ինքնաբերաբար միջամտելէ վերջ, ամբողջ անգէն ժողովուրդ մը լքեցին՝ անսահման կոտորածին միջոցին՝ իր անարգ փողոտիներուն ձեռքը:

«Այդ թուականէն ի վեր, որ՝ Արեւելի մէջ՝ երոպական ազդեցութեան ու հմայքին սնանկութիւնը հոչակեց, Թիւրքիոյ հայերուն ամբողջական բնաջնջումը կը շարունակուի սիողէմաղիօրէն՝ ու հրէշուտը մոլեգնութեամբ մը: Նորագոյն ու վաւերական լուրերը ամենէն մթին գոյնովը կը ներկայացնեն հայերուն կացութիւնը ամբողջ Հայաստանի մէջ, — Չար, սպանութիւն, խմբովին ու կտմայական ձերբակալութիւն, աքսոր, կիներու եւ աղջիկներու լլկում, թալան, նախատիք քրիստոնէական կրօնքին, եկեղեցիներու և վանքերու պղծում, բռնի հաւատափոխութիւն իսլամութեան, ահա՛, ինչ որ ձեր լքուած զոհերը, ձեր երէկուան պաշտպանեալները կը քաշեն ամէն օր:

«Քաղաքակիրթ աշխարհը շանգիտեր «երոպական ներդաշնակութեան» անհամաձայնութիւնը — այնքան համաձայն՝ կրեալի առջեւ, ու Չինաստան, ուր բուռ մը քրիստոնեաներու կեանքը վտանգի մէջ էր — որ արգիլեց Մեծ-Պետութիւնները երեք հարիւր հազար հայերու արիւնահեղութեան առաջը: անոնք ու բարեկարգութեանց հանդիսաւորէն կրկնուած խոստումներնին բռնել: Եւ սակայն ամբողջ աշխարհ զիտէ նաև որ շարժում մը, խօսք մը՝ անկեղծօրէն ու կորովիօրէն արտասանուելով Պետութիւններու, նոյն իսկ Պետութեան մը կողմէ՝ պիտի բաւեր կեցնելու սփրաքործ ձեռքը՝ իր Երկրորդի Բանտին մէջ զողացող կայսերական մարդասպանին:

«Հնչական Քօմիթէն Ձեր Վսեմութեան Քարեացակամ ուշադրութիւնը կը հրաւիրէ տագնապիչ կացութեանը վրայ կտրիճ Սասունցիներուն, որոնք զիտեն, 1894-ի արիւնոտ փորձառութեամբը, թէ իրենց լեռներուն լքումը օրիշ բան չի նշանակեր, եթէ ոչ իրենց ամբողջական ու անմիջական խողխողումը:»

### ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՔՕՄԻԹԷ ՀՆՉԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Լոնտոն 9 Օգոստոս 1901

Մեր այս ծանօթագիրը՝ ուրիշ քանի մը թերթերէ զատ՝ յեղափոխական անկախ օտկան՝ բարիգեան «ԼՕ-նոս» օրաթերթը հրատարակեց և, այդ առթիւ, Քրանսացի մեծանուն հրապարակագիր Պ. Խուպէն Կօիէ անգամ մըն ալ բարձրացուց՝ Հայերուն ինպաստ՝ իր հզօր ու վրիժառու ձայնը, «ԼՕնոս»-ի օգոստոս 15-ի թիւին մէջ երեւցած՝ «Մեր Ամօթը» վերնագրին տակ՝ առաջնորդող յօդուածով մը:

Կօիէ ընդհանրապէս երոպական դիւանագիտութեան ու մասնաւորապէս պաշտօնական Փրանսայի՝ Հայկական Նահատակութեան հանդէպ ունեցած անարժան գիրքը, ուժգին գայրոյթով մը, զատապարտելու ու՛ շահախնդիր ու չնական քաղաքագէտի տիպար՝ տրիբունաչակ Հանօթօս մոլեգնաբար խարազանելէ վերջ, զարմանք կը յայտնէ, որ տակաւին հայեր կը զըտ-

նուն, որոնք քան մը կը յուսան Երսուպայէն ու կա-  
րող կ'ըլլան աղերսելու «իրենց գահիճին յեղատկից-  
ները, վարձկանները»:

Կօիկի այդ յօդուածը անդամ մըն ալ հաստատեց  
մեզի՝ օտարներէ բան մը չսպասելու ու ազգային  
փրկութիւնը մեր սեփական ուժէն միայն ակնկալելու մեր  
անդրդուելի համոզմանը մէջ: Ատիկա չենք դադրիք  
յստակօրէն կրկնելէ, ամէն անգամ, ու ատիկա խոր-  
քը կը կազմէ մեր յեղափոխական բրօքրականտին: Բայց  
յեղափոխական կուսակցութիւններու կեդրոնական վար-  
չութեանց տարրական պարտականութիւնն է՝ չզայտե-  
լով հանդերձ իրենց բոլոր ճիգերն ու ուշադրութիւնը  
ազգային յեղափոխական ուժին հզօրացմանը կեդրո-  
նացնել՝ առիթը չփախցնել՝ ամէն վերահաս ու սպառ-  
նացող վտանգի հաւանականութեան առջին բողոքելու,  
ազդարարելու, կանխատեսելու: Պէտք է որ մեր ցեղին  
յամբօրէն սղոցուող կեանքին աղաղակները հասնին միշտ  
«քաղաքակրթութեան» պաշտօնական ներկայացուցիչնե-  
րուն ակաւնջին ու պէտք է որ երբեմն մեր արիւնը խոր-  
հրդանշող կնիքներով թուղթեր՝ անոնց ձեռներնորուն  
մէջ պղծուելէ վերջ՝ անոնց խղճմտանքներուն աղբիւրը  
նետուին:

Պէտք չէ՛ սակայն որ աղերսենք, պէտք չէ՛ որ զը-  
թութիւն մուրանք, այլ պէտք է արգարութիւն պահանջենք  
միայն: Մեր անոնց ուշադր վերջին նօթը աղերսագիր  
մը չէր, ինչպէս կը տեսնէք վերև, այլ ազդարարագիր մը,  
— երանգ, որ վրիպած ըլլալ կը թուի բացարձակապաշտ  
քամֆլիքեօին ուշադրութենէն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՕՒՆ

Պատրիարքարանի շուրջը նոյն անկենդան մեռելու-  
թիւնը կը տիրէ: Անոնք որ Պատրիարքարանի նիւթական  
չէնքը նորոգելու սատարեցին, կարծեցին թէ ազգին  
այդ տան վերակենդանութիւնը կը պատրաստեն,  
բայց նորոգեալ նիւթական շէնքին տեղ, քայքայ-  
եալ բարոյական շէնք մը կայ, որ օրէ օր ոչնչանալու,  
փճանալու կը միտի: Եւ օրուան վիճակին պատասխա-  
նատունները, ոմանք պատարագով, պոռոտախօսութիւ-  
նով, ուրիշներ շահագրտական նպատակով, վիճակը  
ծածկելու կը նային: Սասունէն, Մուշէն, Բաղեշէն ա-

ղիկտուր շուրքը կը հասնին: Աւրոյշ գիւղեր զինուորներով  
և քիւրտերով պաշարուած սարսափի մէջ են, չեն գիտեր  
թէ ինչ պիտի ըլլան վայրկեանէ վայրկեան և այս աղե-  
խարշ նկարագրութիւնները պատրիարքարան հասած  
պահուն, Յրմանեան կ'երթայ Գանտիլի, Պօլսոյ յետին  
մէկ գիւղը, ուր 10-15 ընտանիք հազիւ կան, ըսել տա-  
լու համար որ պատրիարքը այնչափ ժողովուրդասէր  
և խոնարհամիտ է որ այդպիսի թաղեր ալ պատարագի  
կուլայ: Այս կեզձ ժողովրդականութեան ձեւը կը զըր-  
ուատեն ու կը փառաբանեն Պօլսոյ թերթերէն անոնք  
որ շահեր ունին Օրմանեանէն: Մինչդեռ պատրիարքը  
իրբև ճարտար լաբախաղաց կ'օրօրէ ժողովուրդը, օր մը  
պատարագով, օր մը կոնպակներով և հանպէսներ կազմա-  
կերպելով: Մեռած ժողովուրդեան մը հետ է գործը, հե-  
տեւարար այս վիճակը շատ երկար կը տեսէ: Ինքն ալ  
այդ ապահովութիւնը ունի արդէն:

Արթին փաշա, վարչական ժողովներու անդամները  
ապահոված էր, որ ստանձնեն պաշտօնին, որովհետև  
քիչ ժամանակէն Պատրիարքարանի պահանջմանց գո-  
հացում պիտի տրուէր: Քիչ ժամանակէն տեղ աժիտներ  
անցան և բան մը չեղաւ, ըլլալու ալ հաւանականութիւն  
չի կայ և սահմանադրական օրինաւոր ժողովներու դի-  
մակին տակ՝ ամէն ապօրինաւորութիւն կը գործուի:

Սիսի ինչիրը, որ այնքան ժամանակէ ի վեր անլու-  
ծելի կը մնար, այս շաբթու լուծուեցաւ: Գիտը, որ  
ինչիրը նախարարաց խորհրդոյ որոշման ենթադրեր էր,  
արդիւնքը հազորչեց Պատրիարքարան, պատուիրելով որ  
Գրան պահանջման յար և նման եղանակաւ կառարուի  
ընտրութիւնը եւ ձեւակերպութիւնը լրացնելու համար  
Պատրիարքարանի կողմէ ներկայ գտնուի Սահակ եպիս-  
կոպոս Խաչայեան, որ հանդիսատես մը պիտի ըլլայ եւ  
բուն զերը պիտի կատարէ կառաւարութեան ներկայա-  
ցուցիչը: Այսպէսով Սիսի աթոռին Պօլսոյ Պատրիարքա-  
րանէն բաժանումը, որ տարիներով չկրցաւ իրադրուիլ,  
զուլե կ'ելլէ Օրմանեանին շնորհիւ, որ զժգոհ չէ այս վի-  
ճակէն և ծիծաղելով կը լուծէ պտուարութիւնները ու կը  
խաբէ ժողովուրդը ըսելով որ Սահակ եպիսկոպոսն ա-  
ղեր պիտի ունենայ գործին մէջ, մինչդեռ Դրան տուած  
իրաւունքը պարզ տեղեկատուի մը դերն է:

Օրմանեան գարձեալ սկսած է ամէն մեքենայու-  
թիւններ ի պարձ գնիլ ընտրութեան արդիւնքը իրեն  
նպատատուր դարձնելու համար: Կիլիկիոյ կողմը մարզեր  
կը վարձէ, թղթակցութիւններ կը հաստատէ, բայց միւս  
կողմէն կը խոստովանի ալ թէ հաւանական չէ իր ընտ-  
րութիւնը ու այս կամ այն եկեղեցականը պիտի կոչուի,  
որուն անկարողութեան ու ապիկարութեան մասին խօս-  
քեր կը մտտայ նախանձուս ողիւմ մը: Հետզհետէ կը  
հաստատուի այն կասկածը թէ՛ իրաւ Օրմանեան կը  
փափաքէր Կիլիկիան միացնել Պօլսոյ հետ, իր պատ-  
րիարքութիւնը մշտնջենաւորելու համար: Բայց Կիլիկ-

եացիները ամենէ առաջ հասցան այս կէտը և հետեւաբար շլարծուիր որ իրենց բուէն տան այնպիսի մէկու մը, որ ազգին պարտաւորութիւններուն մէջ անհոյ, անտարբեր Չամբաններ, Կէօքօիներ կը շրջագայի եւ փառաբանութիւններ կ'որոնէ իրեն համար:

Եպատից սնտուին ալ որ ժամանակ մը Օրմանեանի անձնական քօակը եղաւ, դատարկանալ սկսած է. ս'եր են հաշիւները, դեռ պիտի ներկայացուին խառն Ժողովոյ: Այս պարագաները անփտահոյութիւն շարժեցին և հիմա նպատակները զարգած են, որով որմանցներն ալ հետզհետէ փակուելու դատաւարտուած են մինչդեռ տակաւին շատ անօգնական ու խղճալի տղաքներ փողոցները կը թափափին:

Ժողովուրդին ձայնը խեղդուած՝ ո՛չ ոք կայ որ այս վիճակին վերջ մը գնելու յանգանի:

ԼՈՒՐԵՐ

.....

**ՉԵՐԱՊԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ.** Կ. Պոլսէն անգլիական բերքերուն կը հետազոտի որ սուրբակին գահակառքեան տարեկարճը մօտեցած ըլլալով, Պօլիս գոսնրագուեղ հայեր կը ձերբակալուին ու քանա կը նետուին, ուր պիտի մեան մինչև օգոստոս 31:

**ՓՈՒՔՐ ԱՍԻԱ.** Անգլիական բերքերուն վիճակայե՛ն կը հետազոտի թէ փոքր Ասիոյ մէջ Բիւրսէրուն հարստահարիչ բանարարութիւնները վերջին ժամանակներս անեղապէս սաստկացած են: Այս վայրենիներուն դեմ երբ կասաւարտութիւնը ինչ ինչ պարագաներու մէջ խիստ միջոցներ ձեռք առնէ, անոնք աւելի ևս կը գրգռուին, և աւելի մեծ ոճրագործութեանց կը դիմեն: Այսպէս Էրզրումէն կը հաղորդեն թէ տեղական թիւրք իշխանութիւնը քանի մը չարագործ թիւրքեր ձերբակալած ըլլալով, Տերսիմի թիւրքերը սաստկապէս գրգռուեցան աս իրենց վրէժը յաճեցին սպաննելով գաստակիս ոստիկանապետ Մեհմետէտ Ալի պէյը, որուն եղբայրն ալ որ ժանտարանայի պէտ մըն է, ժանտարան վերադարձցին: Վանէն հասած յարերն ալ կը հաղորդեն թէ թիւրք Համիտի հետեւագործները երբ մէկ կողմէն կը շարունակեն զքրիստոնեաները հարստահարել, միւս կողմէն ալ կը նեղեն մահմետականները որոնց կառնածները կը կողոպտեն: Բազմաթիւ մահմետական պէյեր տեսնելով որ անկարելի է իրենց կասաւարտութենէն ո՛ր և է աչակցութիւն գտնել, աղերսագիր մը մատուցեր են տուսական հոգատուին ու խնդրած են որ ի նպաստ իրենց միջամտութիւն ընէ Դրան քով:

**ԷՐԶՐՈՒՄԻ ԴՊՏԸ.** Էր յիշուի թէ Էրզրումի տուս հիշատակար թիւրքերու կողմէն յարձակուած մը մը ենթակուեցաւ երբ Երզնկա կ'երթար: Ռուսիոյ

դեպատուան տոկոսողական պահանջումին վրայ շատ մը թիւրքեր ձերբակալուեցան ու դատաստանի են, քարկուեցան զինուորական տոկանի մը առջև: Ատեալն իր վճիռը տուեր է, անբաստանեակերէն տասն և եօթը հոգի քանտարկութեան դատաւարտուեցան, ու մանք զիեանս, ումանք ժամանակաւոր, են քիչը հինգ տարուան: Երկու տուս կարաւանի վրայ յարձակող թիւրքերու դատաստանն ալ կը տեսնուի:

**Հայրի է քսել** որ դատաւարտութիւնը կատարուեցաւ թիւն մըն է: Մէկ դեմէն քանտարկութեան միւս դեմէն դուքս կը հանուին այս թիւրքերը:

**ՀԱԼԵՊԻ** նահանգի ոչխարի տուրքը, 40 000 ոսկի, որ Ռուսիոյ վճարուելիք պատերազմական տուրքանքին յատկացուած է այս անգամ Դուքսը յաւազոյն համարած է ուղղակի Պօլիս իրկել տայ և գործածել անմիջական պետքերու:

**ՅՐԱՆՍՈՒ ԵՒ ԹԻԻՐԲԻՈՒ.** Կ Պօլսոյ քարափնէրու և ուրիշ գրամական խնդիրներու համար Թրանսայի և Թիւրքիոյ միջև ժազած ժանր խնդիրները կարգադրուեցան վրայ են: Գոչքանք Թրանսայի ալ խաղեր կը խաղայ, և յաջողելու վրայ է: Գործը վեց անտուայ համար յետաճգած է, և կը յուսայ այս ժամանակամիջոցէն օգոստոսի հինգ միջինն ոսկի փոխառութիւն մը յաջողուելու համար: Այդ փոխառութիւնը Թրանսայի պիտի ըլլայ, Թրանսական կասաւարտութեան աչակցութեան, և Պանք Օրմանի միջոցաւ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ

«ՆՈՐ ԿԵՊՆԻՔ» Վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել հետեւեալ հասցէին:

REDACTION DU "NOR-GUIANK,"  
27, BATHURST GARDENS,  
KENSAL RISE,  
(ENGLAND.) LONDON, N. W.

ՆՈՐ ԿԵՊՆԻՔ կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչ և 15 ինչ: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 Քրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար: